



Համարը N 955-Ն

Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա

Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.09.05/45(569)
Հոդ.945

Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.09.2007

Ընդունման ամսաթիվը 28.06.2007
Ստորագրման ամսաթիվը 30.08.2007
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՂ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2007 թվականի N 955-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՂ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետի և 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
 - 1) Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 23-ի «Ճանապարհային երթևեկության կանոնները հաստատելու մասին» N 924 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի սեպտեմբերի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ս. Սարգսյան

2007 թ. օգոստոսի 30
Երևան

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոններով (այսուհետ՝ կանոններ) սահմանվում է ճանապարհային երթևեկության միասնական կարգ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ կարգավորելով ճանապարհային երթևեկության ընթացքում օգտագործվող լուսացույցի, կարգավորողի ազդանշանների, վթարային, հատուկ ազդանշանների, տրանսպորտային միջոցների արտաքին լուսային սարքերի և ձայնային ազդանշանների կիրառման, տարբեր պայմաններում երթևեկության, երթևեկության արագությունը կանոնակարգելու, վազանց, կանգառ և կայանում, խաչմերուկների անցում, հետիոտնային անցումների հատում, տրանսպորտային միջոցների քարշակում, ուսումնական վարում, մարդկանց և բեռների փոխադրում իրականացնելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև երթևեկությունը կարգավորող նշանները:

2. Հայաստանի Հանրապետության ճանապարհներին սահմանված է տրանսպորտային միջոցների աջակողմյան երթևեկություն:

3. Կանոններում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) գլխավոր ճանապարհ՝ 2.1՝ «Գլխավոր ճանապարհ», 2.3.1՝ «Հատում երկրորդական ճանապարհի հետ», 2.3.2 - 2.3.7՝ «Երկրորդական ճանապարհի հարում» 2.3.8-2|3|11՝ «Երկրորդական ճանապարհների հարում», կամ 5.1՝ «Ավտոմայրուղի» նշաններով նշված ճանապարհ հատողի (հարողի) նկատմամբ կամ կոշտ ծածկույթով (ասֆալտբետոն, ցեմենտբետոն, քարե նյութեր և այլն) ճանապարհ հողային ծածկույթ ունեցողի նկատմամբ, կամ էլ ցանկացած ճանապարհ մերձակա տարածքներից դուրս եկող ճանապարհի նկատմամբ: Առանց ծածկույթի հողային ճանապարհի վրա, անմիջապես խաչմերուկից առաջ, ծածկույթով հատվածի առկայությունն այդ ճանապարհը հատվող ծածկույթով ճանապարհին հավասարագոր չի դարձնում:

2) երթևեկության առավելություն՝ այլ տրանսպորտային միջոցների վարորդների (այսուհետ՝ վարորդներ) նկատմամբ՝ նախընտրած ուղղությամբ առաջնահերթ երթևեկելու իրավունք:

3) չստեղծել խոչընդոտ երթևեկության այլ մասնակիցների համար՝ երթևեկության մասնակիցներին ուղղված պահանջ, որի համաձայն նրանք չպետք է որևէ ձևով խոչընդոտեն. ուղևորներն ու հետիոտները՝ տրանսպորտային միջոցների, իսկ վարորդները՝ հետիոտների և այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

4) կազմակերպված տրանսպորտային շարասյուն՝ մշտապես միացված լսատերներով, միննույն երթևեկության գոտիով անմիջապես իրար հետևից ընթացող առնվազն 3 մեխանիկական տրանսպորտային միջոցների խումբ, որն առջևից ուղեկցվում է կապույտ և կարմիր առկայծող փարոսիկները միացրած տրանսպորտային միջոցով:

5) երթևեկության սկիզբ՝ կանգառի կամ կայանման վայրից տրանսպորտային միջոցի շարժումն սկսելու պահը՝ կապված հարևան երթևեկության գոտի վերադասավորման հետ կամ առանց դրա:

6) մանևրում՝ տրանսպորտային միջոցի երթևեկության սկիզբ (կապված հարևան երթևեկության գոտի դուրս գալու հետ), վերադասավորում, երթևեկության ուղղության փոփոխություն, կանգառ (վերադասավորվելու) և հետընթաց կատարելը:

7) վերադասավորում՝ տրանսպորտային միջոցի զբաղեցրած երթևեկության գոտուց կամ գծանշված երթևեկության գոտու սահմաններում զբաղեցրած շարքից, երթևեկության սկզբնական ուղղությունը պահպանելով, դուրս գալը:

8) երթևեկության ուղղության փոփոխություն՝ նախկինում ընտրած երթևեկության ուղղության փոփոխություն (բացառությամբ հետընթացի)՝ կատարվող շրջադարձի կամ հետադարձի միջոցով:

9) շրջադարձ՝ տրանսպորտային միջոցի՝ այլ ճանապարհ կամ ճանապարհից մերձակա տարածք դուրս գալու նպատակով իրականացվող մանևր:

10) հետադարձ՝ տրանսպորտային միջոցի շարժման ուղղությունը հանդիպակաց ուղղությամբ փոխելու նպատակով իրականացվող մանևր:

11) վազանց՝ շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ:

12) արգելք՝ երթևեկելի մասի որևէ գոտու վրա գտնվող անշարժ օբյեկտ (վնասված կամ անսարք տրանսպորտային միջոց, կողմնակի առարկա, ճանապարհի ծածկույթի վնասվածք և այլն), որը վարորդներին զրկում է նույն գոտիով երթևեկությունը շարունակելու հնարավորությունից:

13) երթևեկության համար վտանգ՝ երթևեկության ժամանակ ստեղծված իրադրություն, երբ նույն ուղղությամբ

և (կամ) նույն արագությամբ երթևեկությունը շարունակելու դեպքում կստեղծվի ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման իրական վտանգ.

14) կողանցում` շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներից առաջ անցնելը` առանց զբաղեցրած գոտուց դուրս գալու.

15) վտանգավոր բեռ` վտանգավոր նյութ, հումք, վտանգավոր թափոններ, որոնք փոխադրման ընթացքում իրենց յուրահատկությունների հետևանքով կարող են վնաս պատճառել մարդկանց կյանքին և առողջությանը, առաջացնել շրջակա միջավայրի աղտոտում և վնասել տրանսպորտային միջոցները կամ շենքերն ու շինությունները.

16) երեխաների կազմակերպված խմբերի փոխադրում` մեխանիկական տրանսպորտային միջոցով (բացառությամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների) նախադպրոցական և դպրոցական տարիքի երկու և ավելի երեխաների կազմակերպված փոխադրում.

17) սահմանափակ տեսանելիություն` երթևեկության մասնակցի տեղից շարժման ուղղությամբ ճանապարհի տեսանելիություն` սահմանափակված տրանսպորտային միջոցներով, ճանապարհի երկրաչափական չափանիշներով, տեղանքի ռելիեֆով, ճանապարհին հարակից բուսականությամբ, շինություններով և այլ օբյեկտներով.

18) հետիոտնային և հեծանվային արահետ (հեծանվահետիոտնային արահետ)` երթևեկելի մասից կառուցվածքով առանձնացված ճանապարհի տարր (կամ առանձին ճանապարհ)` նախատեսված հետիոտներից առանձին կամ նրանց հետ համատեղ հեծանվորդների երթևեկության համար և նշված 4.5.2-4.5.7 նշաններով.

19) հեծանվորդների համար գոտի` երթևեկելի մասի մյուս հատվածից հորիզոնական գծանշումով առանձնացված և 5.14.2 նշանով նշված երթևեկելի մասի գոտի` նախատեսված հեծանիվներով և մոպեդներով երթևեկելու համար.

20) հիբրիդային ավտոմոբիլ` էներգիայի 2-ից ոչ պակաս տարբեր փոխակերպիչներ (շարժիչներ) ունեցող և տրանսպորտային միջոցը շարժման մեջ դնելու նպատակների համար էներգիայի կուտակման 2 տարբեր համակարգեր ունեցող տրանսպորտային միջոց:

(3-րդ կետը խմբ., լրաց. 20.11.08 N 1373-Ն, փոփ., խմբ., լրաց. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, 19.01.23 N 71-Ն)

II. ԼՈՒՍԱԳՈՒՅՑԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ (նկար 1)

4. Լուսացույցներում կիրառվում են կանաչ, դեղին, կարմիր և լուսնաապիտակ գույների լուսային ազդանշաններ:

5. Կախված գործածման նպատակից` լուսացույցները լինում են տրանսպորտային, հետիոտնային և հեծանվորդների երթևեկությունը կարգավորող, իսկ դրանց ազդանշանները` կլոր (առանց պատկերի), ինչպես նաև պատկերներով` սլաքի (սլաքների), հետիոտնի կամ հեծանիվի ուրվապատկերի տեսքով և «X»-աձև:

6. Կլոր ազդանշաններով լուսացույցները կարող են ունենալ մեկ կամ երկու կանաչ սլաքի (սլաքների) տեսքով ազդանշաններով լրացուցիչ մասեր (սեկցիաներ), որոնք տեղադրվում են կանաչ ազդանշանի մակարդակի վրա:

7. Լուսացույցի կլոր ազդանշաններն ունեն հետևյալ նշանակությունները`

1) կանաչ ազդանշանը թույլատրում է երթևեկությունը (կանաչ ազդանշանի գործողության ավարտին մնացած ժամանակի մասին (վայրկյաններով) վարորդներին և հետիոտներին տեղեկացնելու համար կարող են կիրառվել թվատախտակներ).

2) կանաչ թարթող ազդանշանը թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում, որ դրա գործողության ժամկետը լրանում է, և շուտով կմիանա արգելող ազդանշանը.

3) դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին.

4) դեղին թարթող ազդանշանը թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում չկարգավորվող խաչմերուկի կամ հետիոտնային անցման առկայության, ինչպես նաև նախազգուշացնում որևէ վտանգի մասին.

5) կարմիր ազդանշանը, այդ թվում նաև թարթող, արգելում է երթևեկությունը (կարմիր ազդանշանի գործողության ավարտին մնացած ժամանակի մասին (վայրկյաններով) վարորդներին և հետիոտներին տեղեկացնելու համար կարող են կիրառվել թվատախտակներ).

6) կարմիր և դեղին ազդանշանների գույնակցումն արգելում է երթևեկությունը և տեղեկացնում կանաչ ազդանշանի առաջիկա միանալու մասին:

(7-րդ կետը լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն)

8. Լուսացույցի կարմիր, դեղին և կանաչ գույների սլաքների տեսքով ազդանշաններն ունեն նույն նշանակությունը, ինչ համապատասխան գույնի կլոր ազդանշանները, սակայն դրանց գործողությունը տարածվում է միայն սլաքներով նշված ուղղության (ուղղությունների) վրա: Այդ դեպքում ձախ շրջադարձ թույլատրող սլաքը թույլատրում է նաև հետադարձը, եթե դա արգելված չէ համապատասխան ճանապարհային նշանով: Նույն նշանակությունն ունի լրացուցիչ սեկցիայի կանաչ սլաքը: Լրացուցիչ սեկցիայի անջատված ազդանշանն արգելում է երթևեկությունն այդ սեկցիայով կարգավորվող ուղղությամբ:

9. Կարմիր և դեղին գույների սլաքների փոխարեն կարող են օգտագործվել սև ուրվագծային սլաքներով նույն նշանակությունն ունեցող կարմիր և դեղին կլոր ազդանշաններ:

10. Լուսացույցի հիմնական կանաչ ազդանշանի սև ուրվագծային սլաքը (սլաքները) վարորդներին տեղեկացնում է

լրացուցիչ սեկցիայի առկայության մասին և ցույց տալիս թույլատրված երթևեկության այնպիսի ուղղություններ, որոնք նախատեսված չեն լրացուցիչ սեկցիայի ազդանշանով:

(10-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

11. Հեծանվորդների երթևեկությունը կարգավորելու համար կիրառվում են հեծանվով, իսկ հետիոտների տեղաշարժը՝ հետիոտնի ուրվապատկերների տեսքով լուսացույցի ազդանշաններ: Թույլատրվում է տրանսպորտային լուսացույցի ներքնում տեղակայել լուսնասպիտակ (դեղնավուն) գույնի, մարդու և սլաքի ուրվագծով, թարթող տեղեկատու-լուսային սեկցիաներ, որոնք վարորդներին նախազգուշացնում են անցումի վրա հետիոտների գտնվելու մասին: Հեծանվորդների երթևեկությունը կարգավորելու համար կարող է կիրառվել նաև փոքրացրած չափերի կլոր ազդանշաններով լուսացույց՝ հեծանվով ուրվապատկերով ցուցանակի հետ միասին:

(11-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 19.01.23 N 71-Ն)

12. Ճանապարհների վրա կույր հետիոտների հաճախակի հայտնվելու վայրերում, երթևեկելի մասը հատելու հնարավորության մասին նրանց տեղեկացնելու համար լուսացույցի կանաչ լուսային ազդանշանը կարող է ուղեկցվել տրանսպորտային միջոցների ձայնային (հատուկ) ազդանշաններից տարբերվող ձայնային ազդանշանով:

(12-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

13. Տրանսպորտային միջոցների երթևեկությունը երթևեկելի մասի առանձին գոտիներով կարգավորելու համար, մասնավորապես, այն գոտիների, որոնցով երթևեկության ուղղությունը կարող է փոխվել հանդիպակացի, կիրառվում են դարձափոխային լուսացույցներ՝ «X»-աձև կարմիր և դեպի ներքև ուղղված սլաքի տեսքով՝ կանաչ ազդանշաններով, որոնք համապատասխանաբար արգելում կամ թույլատրում են երթևեկությունն այն գոտիով, որի վերնում տեղակայված են: Դարձափոխային լուսացույցների հիմնական ազդանշանները կարող են լրացվել անկյունագծով դեպի ներքև՝ աջ կամ ձախ ուղղված սլաքի տեսքով՝ դեղին ազդանշանով, որի միացումը տեղեկացնում է ազդանշանի փոխվելու և դեպի սլաքով նշված գոտի վերադասավորվելու անհրաժեշտության մասին: Եթե երկու կողմից 1.9 գծանշամամբ նշված գոտու վերնում տեղակայված դարձափոխային լուսացույցի ազդանշաններն անջատված են, ապա մուտքն այդ գոտի արգելված է:

14. Տրամվայների, ինչպես նաև առանձնացված գոտիով երթևեկող ընդհանուր օգտագործման այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորելու համար կարող են կիրառվել «T»-աձև դասավորված միագույն, լուսնասպիտակ չորս կլոր ազդանշաններ ունեցող լուսացույցներ: Երթևեկությունը թույլատրվում է միայն ներքևի և վերևի ազդանշաններից մեկի կամ մի քանիսի միաժամանակ միացված լինելու դեպքում, ընդ որում, ձախը թույլատրում է երթևեկությունը դեպի ձախ, միջինը՝ ուղիղ, իսկ աջը՝ դեպի աջ: Եթե լուսացույցի վերևի մեկ կամ մի քանի ազդանշաններ միացված են առանց ներքևի ազդանշանի, ապա երթևեկությունն արգելված է:

15. Երկաթուղային գծանցի վրա տեղակայված կլոր լուսնասպիտակ թարթող ազդանշանը թույլատրում է, իսկ կարմիրը՝ արգելում տրանսպորտային միջոցների երթևեկությունը գծանցով: Եթե թարթող լուսնասպիտակ և կարմիր ազդանշաններն անջատված են, ապա երթևեկությունը թույլատրվում է տեսանելիության սահմաններում՝ մոտեցող գնացքի (լոկոմոտիվի, երկաթուղային սայլակի) բացակայության դեպքում:

(15-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

16. Կարգավորողի ազդանշաններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) **ձեռքը բարձրացված է դեպի վեր**՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունը և հետիոտների տեղաշարժն արգելված է՝ բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) **ձեռքերը պարզված են կողմ կամ իջեցված են**՝

ա. ձախ և աջ կողմերից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրված է ուղիղ և դեպի աջ, տրամվայինը՝ ուղիղ: Հետիոտներին թույլատրվում է հատել երթևեկելի մասը կարգավորողի աջ և ձախ կողմերից, բ. թիկունքի և կրծքի կողմից բոլոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և հետիոտների տեղաշարժն արգելված են.

3) **աջ ձեռքը պարզված է առաջ**՝

ա. ձախ կողմից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրված է բոլոր ուղղություններով, տրամվայինը՝ դեպի ձախ,

բ. կրծքի կողմից բոլոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրված է դեպի աջ,

գ. թիկունքից և աջ կողմից բոլոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելված է,

դ. հետիոտներին թույլատրվում է երթևեկելի մասը հատել կարգավորողի թիկունքի կողմով:

(16-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

17. Ազդանշանների լավ տեսանելիության համար կարգավորողը կարող է օգտագործել ցուցաձող, այդ թվում՝ կարմիր ազդանշանով կամ լուսանդրադարձիչ սկավառակով, իսկ երթևեկության մասնակիցների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար՝ ազդանշան տալ նաև սուլիչով: Կարգավորողը կարող է ձեռքով տալ վարորդների ու հետիոտների համար հասկանալի նաև այլ ազդանշաններ:

18. Լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝

1) հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար.

2) երկաթուղային գծանցից առաջ՝ կանոնների 111-րդ կետի պահանջներին համապատասխան.

3) այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

(18-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

19. Դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

20. Վարորդներն ու հետիոտները պետք է կատարեն կարգավորողի կարգադրությունների և ազդանշանների պահանջները, նույնիսկ այն դեպքերում, եթե դրանք հակասում են լուսացույցի ազդանշաններին ու ճանապարհային նշանների կամ գծանշումների պահանջներին:

21. Երկաթուղային գծանցներում լուսացույցի կարմիր թարթող ազդանշանի հետ միաժամանակ կարող է տրվել նաև ձայնային ազդանշան, որը երթևեկության մասնակիցներին լրացուցիչ տեղեկացնում է գծանցով երթևեկությունն արգելելու մասին:

III. ՎԹԱՐԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԻ ԵՎ «ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՆԳԱՌ» ՃԱՆԱՉՄԱՆ ՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

22. Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի՝

- 1) ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում.
- 2) կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում.
- 3) լապտերների լույսից վարորդի շլացման դեպքում.
- 4) քարշակման դեպքում (քարշակվող տրանսպորտային միջոցի վրա):

Վարորդը վթարային լուսային ազդանշանը պետք է միացնի նաև այն դեպքերում, երբ վտանգի մասին անհրաժեշտ է նախազգուշացնել երթևեկության մասնակիցներին:

23. Վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի «Վթարային կանգառ» ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝

- 1) ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում.
- 2) կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում, ինչպես նաև այն տեղերում, որտեղ, ելնելով տեսանելիության պայմաններից, տրանսպորտային միջոցը չի կարող ժամանակին նկատվել այլ վարորդների կողմից: Այս պահանջը կատարելուց հետո վարորդը պետք է կատարի կանոնների 83-րդ կետի պահանջները:

Ելնելով վարորդներին ժամանակին զգուշացնելու անհրաժեշտությունից՝ «Վթարային կանգառ» նշանը (թարթող կարմիր լապտերիկ) տեղադրվում է բնակավայրերում՝ տրանսպորտային միջոցից ոչ պակաս 15 մ, իսկ բնակավայրերից դուրս՝ 30 մ հեռավորության վրա:

24. Վթարային լուսային ազդանշանի բացակայության կամ անսարքության դեպքում «Վթարային կանգառ» նշանը տեղադրվում է քարշակվող տրանսպորտային միջոցի հետևի մասում:

25. Արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:

(25-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն)

IV. ՀԱՏՈՒԿ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

26. Կապույտ գույնի առկայծող փարոսիկը միացրած տրանսպորտային միջոցների վարորդները, անհետաձգելի ծառայողական առաջադրանքներ կատարելիս, ապահովելով երթևեկության անվտանգությունը, կարող են չպահպանել կանոնների II (բացի կարգավորողի ազդանշաններից), V-XVI, XIX և XXI բաժինների պահանջները: Երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար նրանք պետք է միացնեն կապույտ գույնի առկայծող փարոսիկը և հատուկ ձայնային ազդանշանը, որը բարձր և ցածր ձայնային երանգների հերթականությունն է ու տարբերվում է տրանսպորտային միջոցների ձայնային ազդանշաններից: Այդպիսի տրանսպորտային միջոցների վարորդներն առավելությունից կարող են օգտվել միայն համոզվելով, որ ճանապարհն իրենց զիջում են: Այդ իրավունքից օգտվում են նաև այն վարորդները, որոնց տրանսպորտային միջոցներն ուղեկցվում են կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցներով:

(26-րդ կետը փոփ., լրաց. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

27I Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության զինվորական ավտոտեսչության տրանսպորտային միջոցների վրա կարող է միացված լինել նաև կարմիր գույնի առկայծող փարոսիկ:

(27-րդ կետը խմբ. 11.08.22 N 1230-Ն)

28. Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցի

մոտենալու դեպքում վարորդները պետք է զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

(28-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

29. Կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է իջեցնեն արագությունը և զիջեն ճանապարհը՝ նշված, ինչպես նաև դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

30. Կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ վարորդները պետք է իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել:

(30-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն)

31. Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդները պետք է կանգ առնեն և շարունակեն երթևեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:

(31-րդ կետը փոփ., լրաց. 20.11.08 N 1373-Ն)

32. Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկները երթևեկության առավելություն չեն տալիս և ծառայում են երթևեկության մյուս մասնակիցներին վտանգի մասին նախազգուշացնելու համար:

33. Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկները պետք է միացված լինեն՝

1) այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք իրականացնում են ճանապարհների շինարարության, վերանորոգման, պահպանման կամ մաքրման, անսարք, վթարված և այլ տրանսպորտային միջոցների բարձման ու փոխադրման աշխատանքներ.

2) կանոնների 163-րդ կետով սահմանված ցուցանիշները գերազանցող չափերով, մեծ եզրաչափերով բեռներ փոխադրող և դրանք ուղեկցող տրանսպորտային միջոցների վրա.

3) վտանգավոր բեռներ և չվնասագերծված տարա փոխադրող ու դրանք ուղեկցող տրանսպորտային միջոցների վրա:

(33-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

34. Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկներ միացրած՝ կանոնների 33-րդ կետի 1-ին ենթակետում նշված տրանսպորտային միջոցների վարորդները, ապահովելով երթևեկության անվտանգությունը, կարող են չպահպանել կանոնների 42-րդ, 55-60-րդ, 63-րդ և 116-րդ կետերի, գծանշումների և նշանների պահանջները՝ բացառությամբ 2.2՝ «Գլխավոր ճանապարհի վերջ», 2.4՝ «Զիջեք ճանապարհը», 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է», 2.6՝ «Հանդիպակաց երթևեկության առավելություն», 3.11՝ «Զանգվածի սահմանափակում», 3.12՝ «Մոնու վրա բեռնվածության սահմանափակում», 3.13՝ «Բարձրության սահմանափակում», 3.14՝ «Լայնության սահմանափակում», 3.17.2՝ «Վտանգ», 3.20՝ «Վազանց արգելվում է» ճանապարհային նշանների: Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկներ միացրած՝ կանոնների 33-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցների վարորդները, ապահովելով երթևեկության անվտանգությունը, կարող են չպահպանել կանոնների 60-րդ կետի և գծանշումների պահանջները:

(34-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

35. Լուսնաապիտակ գույնի առկայծող փարոսիկներով կահավորված տրանսպորտային միջոցների վարորդները կարող են դրանք միացնել, ընդ որում, հատուկ ձայնային ազդանշանի հետ միասին, միայն այդ տրանսպորտային միջոցների վրա հարձակում գործելու դեպքում: Այդ փարոսիկները երթևեկության առավելություն չեն տալիս ու ծառայում են միայն ոստիկանության ծառայողների և այլ անձանց ուշադրությունը գրավելու համար:

V. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՄԱՆԵՎՐՈՒՄԸ

36. Երթևեկությունն սկսելուց կամ մանևր կատարելուց առաջ երթևեկության այլ մասնակիցներին նախազգուշացնելու համար վարորդը պետք է տա ազդանշան համապատասխան ուղղության շրջադարձի լուսային ցուցիչով, իսկ եթե այն բացակայում է կամ անսարք է՝ ձեռքով: Ազդանշան տալը պարտադիր չէ, եթե տրանսպորտային միջոցն առանց վերադասավորում կատարելու երթևեկում է ճանապարհի՝ հասակագծում կորագծային հատվածով: Ազդանշանը պետք է տրվի նախօրոք, մինչև երթևեկությունը կամ մանևրն սկսելը և դադարեցվի երթևեկությունը կամ մանևրն ավարտելուց անմիջապես հետո (ձեռքով տրվող ազդանշանը դադարեցվում է երթևեկությունը կամ մանևրն սկսելուց անմիջապես առաջ): Այն պետք է տրվի հստակ, շփոթության մեջ չզգցի երթևեկության մասնակիցներին, իսկ մանևրը՝ խոչընդոտ չստեղծի նրանց համար: Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն չի տալիս:

(36-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն, փոփ. 15.12.11 N 1798-Ն)

37. Ձախ շրջադարձի (հետադարձի) ազդանշանին համապատասխանում է դեպի կողմ ուղղված ձախ ձեռքը կամ արմունկում ուղիղ անկյան տակ դեպի վեր ծալված աջ ձեռքը: Աջ շրջադարձի ազդանշանին համապատասխանում է դեպի կողմ ուղղված աջ ձեռքը կամ արմունկում ուղիղ անկյան տակ դեպի վեր ծալված ձախ ձեռքը: Արգելակման ազդանշանին համապատասխանում է դեպի վեր պարզված աջ կամ ձախ ձեռքը:

38. Մերձակա տարածքից ճանապարհ դուրս գալիս՝ վարորդը պետք է ճանապարհը զիջի դրանով երթևեկող

տրանսպորտային միջոցներին, իսկ ճանապարհից մերձակա տարածք մուտք գործելիս՝ հեծանվորդներին: Երկու դեպքում էլ չպետք է ստեղծվի խոչընդոտ հետիոտների համար:

(38-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

39. Վերադասավորման ժամանակ վարորդը պետք է ճանապարհը զիջի համընթաց, հարևան երթևեկության գոտիներով առանց ուղղությունը փոխելու երթևեկող տրանսպորտային միջոցներին: Համընթաց ուղղությամբ երթևեկող տրանսպորտային միջոցների միաժամանակյա վերադասավորման դեպքում ճանապարհը պետք է զիջի ձախից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:

(39-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

40. Շրջադարձից կամ հետադարձից առաջ վարորդը պետք է նախապես զբաղեցնի երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապատասխան եզրային գոտին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- 1) մուտք է գործում շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ.
 - 2) ճանապարհային նշանով կամ գծանշմամբ թույլատրվում է դա կատարել նաև այլ գոտիներից.
 - 3) հնարավորություն չունի դա կատարելու՝ տրանսպորտային միջոցի եզրաչափերի կամ այլ պատճառներով:
- Երթևեկելի մասի ձախ կողմում, նույն մակարդակի վրա համընթաց ուղղության տրամվայի գծերի առկայության դեպքում, ձախ շրջադարձը և հետադարձը պետք է կատարվեն այդ գծերի վրայից, եթե 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով» կամ 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով» նշաններով կամ էլ 1.18 գծանշմամբ երթևեկության այլ կարգավորում նախատեսված չէ: Այդ դեպքում չպետք է խոչընդոտ ստեղծվի տրամվային:

(40-րդ կետը լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն)

41. Շրջադարձը պետք է իրականացվի այնպես, որպեսզի երթևեկելի մասերի փոխհատումից դուրս գալիս տրանսպորտային միջոցը չհայտնվի երթևեկության հանդիպակաց կողմում: Աջ շրջադարձի ժամանակ տրանսպորտային միջոցը պետք է երթևեկի երթևեկելի մասի աջ եզրին հնարավորին չափ մոտ:

(41-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

42. Շրջադարձը դեպի դարձափոխային երթևեկությամբ ճանապարհ պետք է իրականացվի այնպես, որպեսզի երթևեկելի մասերի փոխհատումից դուրս գալիս տրանսպորտային միջոցը հայտնվի աջ եզրային մասում, որից հետո, անհրաժեշտության դեպքում, կարելի է վերադասավորվել, եթե վարորդը համոզված է, որ տվյալ ուղղությամբ երթևեկությունը թույլատրվում է նաև այլ գոտիով:

(42-րդ կետը լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն)

43. Խաչմերուկներում, ինչպես նաև դրանցից դուրս, շրջադարձ կամ հետադարձ կատարելիս, տրանսպորտային միջոցի եզրաչափերի կամ այլ պատճառով կանոնների 40-րդ կետի պահանջներն ապահովելու հնարավորություն չունենալու դեպքում վարորդը պետք է միացնի վթարային լուսային ազդանշանը և զիջի ճանապարհը՝ ինչպես համընթաց, այնպես էլ՝ հանդիպակաց ուղղություններից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին:

(43-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

44. Խաչմերուկից դուրս ձախ շրջադարձի և հետադարձի ժամանակ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի հանդիպակաց տրանսպորտային միջոցներին և համընթաց երթևեկող տրամվային:

(44-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

45. Այն դեպքերում, երբ տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիները հատվում են, իսկ անցման հերթականությունը կանոններով սահմանված չէ, ճանապարհը պետք է զիջի այն վարորդը, որին տրանսպորտային միջոց է մոտենում աջից:

46. Եթե հանդիպակաց երթևեկությունը դժվարացած է, ճանապարհը պետք է զիջի իր առջևում խոչընդոտ ունեցող վարորդը: 1.13՝ «Կտրուկ վայրէջք» և 1.14՝ «Կտրուկ վերելք» նշաններով կահավորված երկայնական թեքությամբ ճանապարհահատվածներում, անկախ խոչընդոտի դասավորությունից, ճանապարհը պետք է զիջի վայրէջքի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:

(46-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

47. Արգելակման գոտու առկայության դեպքում շրջադարձ կատարելու մտադրություն ունեցող վարորդը պետք է նախապես վերադասավորվի այդ գոտի, որտեղ միայն իջեցնի արագությունը: Ճանապարհի մուտք գործելու վայրում, թափառքի գոտու առկայության դեպքում վարորդը պետք է շարունակի երթևեկել դրանով և վերադասավորվի հարևան գոտի՝ զիջելով ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին:

(47-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

48. Տրանսպորտային միջոցների հետընթացը թույլատրվում է, եթե դրա կատարումն անվտանգ է և խոչընդոտ չի ստեղծում երթևեկության մյուս մասնակիցների համար: Անհրաժեշտության դեպքում վարորդը պետք է դիմի այլ անձանց օգնությանը:

49. Հետընթացն արգելվում է խաչմերուկներում, մերձակա տարածքից ճանապարհի դուրս գալիս և կանոնների 50-րդ կետում թվարկված տեղերում:

- 50. Հետադարձն արգելվում է՝
 - 1) հետիոտնային անցումների վրա.
 - 2) թունելներում.
 - 3) կամուրջների, ուղեկամուրջների, էստակադների վրա և դրանց տակ.

- 4) երկաթուղային գծանցներում.
- 5) ճանապարհի թեկուզ և մեկ ուղղությամբ 100 մ-ից պակաս տեսանելիության տեղերում.
- 6) երթևեկելի մասերի այն հատվածներում, որտեղ առկա են ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետեր.
- 7) միակողմ երթևեկությամբ ճանապարհներին:

VI. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍՈՒՄ

51. Ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

(51-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

52. Երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին գծանշման բացակայության դեպքում հանդիպակաց երթևեկության կողմ է համարվում երթևեկելի մասի լայնության ձախ կետը՝ չհաշված երթևեկելի մասի լայնացումները (թափառքի և արգելակման գոտիներ, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի համար լայնացված տեղեր և այլն):

(52-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

53. Երկկողմ երթևեկությամբ չորս և ավելի գոտի ունեցող ճանապարհներին արգելվում է դուրս գալ ճանապարհի հանդիպակաց երթևեկության համար նախատեսված կողմը:

54. Երկկողմ երթևեկությամբ երեք գոտի ունեցող գծանշված (բացառությամբ 1.9 գծանշման) ճանապարհներին, որոնցից միջինն օգտագործվում է երկու ուղղություններով երթևեկության համար, թույլատրվում է դուրս գալ այդ գոտի միայն վազանցի, շրջանցման, ձախ շրջադարձի կամ հետադարձի համար: Արգելվում է մուտք գործել ձախ եզրային գոտի, որը նախատեսված է միայն հանդիպակաց երթևեկության համար:

55. Բնակավայրերից դուրս, ինչպես նաև բնակավայրերում՝ 5.1՝ «Ավտոմայրուղի» կամ 5.3՝ «Ճանապարհ ավտոմոբիլների համար» նշաններով կահավորված ճանապարհներին կամ որտեղ թույլատրվում է երթևեկել 80 կմ/ժ ավելի արագությամբ, տրանսպորտային միջոցների վարորդները պետք է դրանք վարեն երթևեկելի մասի աջ եզրին հնարավորինս մոտ: Այդ դեպքերում արգելվում է զբաղեցնել երթևեկության ձախ գոտիները՝ ազատ աջ գոտիների դեպքում:

56. Բնակավայրերում, հաշվի առնելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասի և կանոնների 55-րդ, 57-58-րդ ու 116-րդ կետերի պահանջները, տրանսպորտային միջոցների վարորդները կարող են երթևեկել իրենց համար հարմար երթևեկության գոտիով: Ինտենսիվ երթևեկության ժամանակ, երբ զբաղված են բոլոր գոտիները, դրանք թույլատրվում է փոխել ձախ և աջ շրջադարձերից, հետադարձից, արգելքը շրջանցելուց կամ կանգառից առաջ:

(56-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

57. Բոլոր ճանապարհներին, մինչև ուղղությամբ երթևեկության երեք և ավելի գոտիների առկայության դեպքում, ձախ եզրայինը թույլատրվում է զբաղեցնել միայն ինտենսիվ երթևեկության ժամանակ, երբ զբաղված են մյուս գոտիները, ինչպես նաև վազանց, ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս, իսկ 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին և ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներին՝ միայն ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար: Միակողմ երթևեկությամբ ճանապարհներին կանգառի կամ կայանման նպատակով ձախ եզրային գոտի դուրս գալն իրականացվում է կանոնների 79-րդ կետի պահանջներին համապատասխան:

(57-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն)

58. Տրանսպորտային միջոցները, որոնց երթևեկության արագությունը չպետք է գերազանցի 40 կմ/ժ, կամ որոնք տեխնիկական պատճառներով չեն կարող զարգացնել այդպիսի արագություն, պետք է երթևեկեն աջ եզրային գոտիով՝ բացառությամբ շրջանցման, վազանցի կամ ձախ շրջադարձից, հետադարձից կամ թույլատրված դեպքերում ձախ կողմում կանգառ կատարելուց առաջ վերադասավորվելու դեպքերի:

(58-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

59. Երթևեկելի մասի ձախ կողմում նույն մակարդակի վրա գտնվող համընթաց ուղղության տրամվայի գծերով երթևեկել թույլատրվում է, եթե բոլոր գոտիներն այդ ուղղությամբ զբաղված են, ինչպես նաև վազանցի, արգելքը շրջանցելու, ձախ շրջադարձի կամ հետադարձի ժամանակ՝ հաշվի առնելով կանոնների 40-րդ կետը: Ընդ որում, խոչընդոտ չպետք է ստեղծվի տրամվային: Եթե խաչմերուկից առաջ տեղադրված են 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով» կամ 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով» նշանները, խաչմերուկում երթևեկությունը տրամվայի գծերով արգելվում է: Արգելվում է երթևեկել հանդիպակաց ուղղությամբ տրամվայի գծերով:

(59-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

60. Եթե երթևեկելի մասը գծանշմամբ բաժանված է գոտիների, ապա տրանսպորտային միջոցների երթևեկությունը պետք է իրականացվի նշված գոտիներով: Ընդհատվող գծերը կարելի է հասել միայն վերադասավորվելիս:

61. Արգելվում է տրանսպորտային միջոցների երթևեկությունը կողնակներով, մայթերով և հետիոտնային արահետներով բացառությամբ կանոնների 81-րդ կետում նշված դեպքերում մայթերին կայանելու նպատակով մանրեղիս: Թույլատրվում է, այլ հնարավորության բացակայության դեպքում, ճանապարհային և կոմունալ սպասարկման ծառայությունների մեքենաներին երթևեկել, իսկ անմիջապես ճանապարհի կողնակների, մայթերի կամ հետիոտնային արահետների մոտ տեղակայված առևտրային և այլ օբյեկտներ սպասարկող տրանսպորտային միջոցներին՝ ամենակարճ ճանապարհով մոտենալ դրանց՝ խոչընդոտ չհանդիսանալով հետիոտններին և ապահովելով երթևեկության անվտանգությունը:

(61-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, խմբ., լրաց. 15.12.11 N 1798-Ն)

62. Վարորդը պետք է իր և առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև պահպանի այնպիսի տարածություն, իսկ կողքով ընթացողներից՝ այնպիսի միջկողային տարածություն, որպեսզի հնարավորություն ունենա խուսափել դրանց հետ բախվելուց:

63. Բնակավայրերից դուրս յուրաքանչյուր ուղղության համար մեկ գոտի ունեցող երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին արագության սահմանափակում կամ 7 մ ավելի երկարություն ունեցող տրանսպորտային միջոցների վարորդները մինչև առջևից ընթացող տրանսպորտային միջոցը պետք է ապահովեն այնպիսի տարածություն, որպեսզի իրենց վազանցող տրանսպորտային միջոցների վարորդներին հնարավորություն տան անհրաժեշտության դեպքում առանց խոչընդոտի վերադասավորվելու նախկինում զբաղեցրած գոտի: Այդ պահանջը չի գործում վազանցն արգելված ճանապարհահատվածներում, ինչպես նաև ինտենսիվ երթևեկության ժամանակ և կազմակերպված տրանսպորտային շարասյան կազմում երթևեկելիս:

64. Վարորդը երկկողմ երթևեկությամբ ճանապարհին, բաժանարար գոտու բացակայության դեպքում երթևեկելի մասում գտնվող անվտանգության կոդակները, կարճայունները և ճանապարհային կառույցների (կամուրջների, ուղեկամուրջների հենասյուներ և այլն) տարրերը պետք է շրջանցի աջ կողմից, եթե նշանները և գծանշումներն այլ բան չեն թելադրում:

(64-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն)

VII. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

65. Վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվությունն ու տրանսպորտային միջոցի և բեռի վիճակն ու առանձնահատկությունները, ճանապարհային և օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ:

66. Վարորդը պետք է ընտրի այնպիսի արագություն, որը հնարավորություն է տալիս նրան կանոնների պահանջներին համապատասխան ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը:

67. Երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում, որը վարորդն ի վիճակի էր հայտնաբերել, նա պետք է միջոցներ ձեռնարկի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ մինչև տրանսպորտային միջոցը կանգնեցնելը: Այդ դեպքում կողանցումն ու շրջանցումը թույլատրելի է, եթե վարորդը համոզված է, որ դա անվտանգ է երթևեկության մյուս մասնակիցների համար:

(67-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

68. Բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ, իսկ այն տարածքներում, որոնց մուտքն ու ելքը նշված են 5.21՝ «Բնակելի գոտի» և 5.22՝ «Բնակելի գոտու վերջ» նշաններով, ինչպես նաև բակային տարածքներում՝ 20 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

69. Բնակավայրերից դուրս երթևեկությունը թույլատրվում է՝

1) 90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ թեթև մարդաստար ավտոմոբիլներով և 3,5 տ ոչ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներով (110 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ ավտոմայրուղիներով):

2) 90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ մերձքաղաքային, միջմարզային և միջքաղաքային փոխադրումներ իրականացնող ավտոբուսներով, միկրոավտոբուսներով ու մոտոցիկլներով՝ բոլոր ճանապարհներին:

3) 70 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ մնացած բոլոր ավտոբուսներով, կցորդի հետ կցված թեթև մարդաստար ավտոմոբիլներին և 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին (90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ ավտոմայրուղիներով):

(69-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

70. Բնակավայրերում և բնակավայրերից դուրս ճանապարհների առանձին հատվածներում, 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ, կարող է սահմանվել սույն կանոնների 68-70-րդ կետերով սահմանված առավելագույն արագությունից ինչպես ցածր, այնպես էլ բարձր արագություն: 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ սույն կանոնների 68-70-րդ կետերով սահմանված առավելագույն արագությունից բարձր արագություն սահմանելու դեպքում այն չի կարող գերազանցել բնակավայրում 80 կմ/ժ-ը, իսկ բնակավայրից դուրս՝ 110 կմ/ժ-ը:

(70-րդ կետը խմբ. 11.04.19 N 439-Ն)

71. Թույլատրվում է երթևեկել՝

1) 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ կահավորված թափքում մարդ փոխադրող բեռնատար ավտոմոբիլներով և երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող տրանսպորտային միջոցներով.

2) 50 կմ/ժ ոչ ավելի արագությամբ՝ միմյանց կցված մեխանիկական տրանսպորտային միջոցներով քարշակում կատարելիս:

(71-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

72. Վարորդին արգելվում է՝

1) գերազանցել տվյալ տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով սահմանված առավելագույն արագությունը.

2) գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը.

3) մեծ եզրաչափերով, վտանգավոր կամ ծանրաքաշ բեռ փոխադրելիս՝ գերազանցել փոխադրման պայմանների համաձայնեցման ժամանակ որոշված արագությունը.

4) առանց անհրաժեշտության ընթանալ շատ ցածր արագությամբ՝ խոչընդոտելով մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությանը.

5) կտրուկ արգելակել, եթե դա անհրաժեշտ չէ ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար:

VIII. ՎԱԶԱՆՑ

73. Վազանցն սկսելուց առաջ վարորդը պետք է համոզվի, որ՝

1) հանդիպակաց երթևեկության գոտին, որը նա պատրաստվում է զբաղեցնել, բավարար տարածությամբ ազատ է վազանցի համար, և որ դրանով խոչընդոտ չի ստեղծի հանդիպակաց ընթացող տրանսպորտային միջոցների համար.

2) իր հետևից նույն գոտիով ընթացող տրանսպորտային միջոցը վազանց չի սկսել, իսկ առջևից ընթացողը վազանցի (ձախ շրջադարձի, հետադարձի) ազդանշան չի տվել.

3) վազանցն ավարտելիս անհրաժեշտության դեպքում կարող է առանց վազանցվող տրանսպորտային միջոցի (միջոցների) համար խոչընդոտ ստեղծելու վերադառնալ նախկինում զբաղեցրած գոտի:

(73-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն, լրաց. 15.12.11 N 1798-Ն)

74. Ոչ ռելազմաց տրանսպորտային միջոցին վազանցել թույլատրվում է միայն ձախ կողմից: Սակայն եթե առջևից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը տվել է ձախ շրջադարձի ազդանշան և սկսել մանևրի կատարումը, ապա այդ տրանսպորտային միջոցին վազանցը կատարվում է աջից:

(74-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն)

75. Վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդին արգելվում է արագությունը բարձրացնելով կամ որևէ այլ գործողությամբ խոչընդոտել վազանց կատարելուն:

76. Եթե բնակավայրերից դուրս դանդաղ ընթաց կամ մեծ եզրաչափեր ունեցող տրանսպորտային միջոցին վազանց կատարելը դժվար է, ապա դրա վարորդը (իսկ ուղեկցման դեպքում՝ նաև ուղեկցող տրանսպորտային միջոցի վարորդը) պետք է երթևեկի հնարավորինս աջով, իսկ անհրաժեշտության դեպքում կանգ առնի և բաց թողնի իր հետևից ընթացող տրանսպորտային միջոցների վարորդներին:

77. Վազանցն արգելվում է՝

1) խաչմերուկներում.

2) հետիոտնային անցումների վրա.

3) երկաթուղային գծանցների վրա և մինչև 100 մ դրանցից առաջ.

4) եթե վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդը կատարում է վազանց կամ շրջանցում է արգելքը.

5) թունելներում, էստակադների, կամուրջների, ուղեկամուրջների վրա և դրանց տակ, ինչպես նաև ճանապարհների նեղացումներում.

6) կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցին.

7) եթե վազանցվող տրանսպորտային միջոցը երթևեկում է կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ ու հատուկ ձայնային ազդանշան միացրած վիճակում կամ ուղեկցվում է այդպիսի տրանսպորտային միջոցներով.

8) վերելքի վերջում և ճանապարհի սահմանափակ տեսանելիությամբ հատվածներում, երբ վազանցը կատարվում է հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով:

(77-րդ կետը խմբ., լրաց. 20.11.08 N 1373-Ն, խմբ. 15.12.11 N 1798-Ն)

IX. ԿԱՆԳԱՌԸ ԵՎ ԿԱՅԱՆՈՒՄԸ

78. Տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը թույլատրվում է ճանապարհի աջ մասում՝ մայթի մոտ կամ կողակին, դրանց բացակայության դեպքում՝ երթևեկելի մասի եզրին: Կանոնների 81-րդ կետով նախատեսված դեպքում կայանումը թույլատրվում է նաև մայթեզրին:

(78-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

79. Բնակավայրերում, երթևեկելի մասի ձախ կողմում կանգառ ու կայանում թույլատրվում է՝

1) յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի ունեցող, մեջտեղում տրամվայի գծեր չունեցող

ճանապարհներին.

2) միակողմ երթևեկության ճանապարհներին (3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներին թույլատրվում է միայն կանգառ՝ բեռնելու կամ բեռնաթափելու, ինչպես նաև ուղևորի նստելու կամ իջնելու համար):

(79-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն)

80. Տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի (երթևեկելի մասի տեղային լայնացում), որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Առանց կողային կցորդի երկանիվ տրանսպորտային միջոցները թույլատրվում է կանգնեցնել երկու շարքով:

81. Երթևեկելի մասին սահմանակից մայթերին կայանման նպատակով կանգնեցնել թույլատրվում է միայն թեթև մարդատար ավտոմոբիլները, մոտոցիկլները, մոպեդները և հեծանիվները՝ 6.4՝ «Կայանման տեղ» նշանի և 8.6.2, 8.6.3, 8.6.6-8.6.9՝ «Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում» ցուցանակներից որևէ մեկի առկայության դեպքում:

82. Բնակավայրերից դուրս երկարատև հանգստի, գիշերակացի և այլ նպատակներով կայանել թույլատրվում է միայն դրանց համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս:

83. Կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում կանոնների 22-րդ և 23-րդ կետերի պահանջները կատարելուց հետո վարորդը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար:

84. Կանգառն արգելվում է՝

1) մայթերին, բացառությամբ 61-րդ կետում նշված դեպքերի, ինչպես նաև տրամվայի գծերի վրա և անմիջապես դրանց մոտ, եթե դա խոչընդոտում է տրամվայների երթևեկությունը.

2) երկաթուղային գծանցների վրա, թունելներում, ինչպես նաև էստակադների, կամուրջների, ուղեկամուրջների վրա և դրանց տակ.

3) այն վայրերում, որտեղ կանգնած տրանսպորտային միջոցի և հոծ գծի (բացառությամբ երթևեկելի մասի եզրը ցույց տվող) կամ բաժանարար գոտու կամ երթևեկելի մասի հակառակ կողմի եզրի կամ որևէ արգելքի միջև տարածությունը 3 մ պակաս է.

4) հետիոտնային անցումների վրա և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում.

5) երթևեկելի մասի վրա՝ ճանապարհի այն վտանգավոր շրջադարձերին և երկայնական պրոֆիլի ուռուցիկ բեկվածքներին մոտիկ, որտեղ ճանապարհի տեսանելիությունը թեկուզ մեկ ուղղությամբ պակաս է 100 մ-ից.

6) խաչմերուկներում, երթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց).

7) 1.17 գծանշմամբ նշված ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կամ, այդ գծանշման բացակայության դեպքում, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կամ տաքսիների կայանման տեղերի ցուցիչներից 15 մ մոտ.

8) այն վայրում, որտեղ տրանսպորտային միջոցը թույլ չի տա երթևեկության մասնակիցներին տեսնելու լուսացույցի ազդանշանները, ճանապարհային նշանները կամ որևէ այլ կերպ կսահմանափակի տեսանելիությունը մյուս տրանսպորտային միջոցների վարորդների ու հետիոտների համար:

(84-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն, խմբ., լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն, փոփ. 11.04.19 N 439-Ն)

85. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառն արգելվում է նաև ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերի տարածքից դուրս՝ բացառությամբ հարկադրված կանգառի դեպքերի:

86. Կայանումն արգելվում է՝

1) կանգառն արգելված վայրում.

2) **(Էնթակետն ուժը կորցրել է 15.12.11 N 1798-Ն)**

3) բնակավայրերից դուրս՝ 2.1. «Գլխավոր ճանապարհ» ճանապարհային նշանով նշված ճանապարհների երթևեկելի մասի վրա.

4) երկաթուղային գծանցներին 50 մ-ից մոտ:

(86-րդ կետը փոփ., խմբ. 15.12.11 N 1798-Ն)

X. ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԸ

86.1. Խաչմերուկին մոտենալիս վարորդը պետք է առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերի՝ ելնելով տեղի պայմաններից: Մասնավորապես, վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի այնպիսի արագությամբ, որ հնարավորություն ունենա կանգնելու և բաց թողնելու անցման առաջնահերթության իրավունք ունեցող փոխադրամիջոցները:

(86.1-ին կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

87. Աջ կամ ձախ շրջադարձ կատարելիս խաչմերուկից դուրս գալիս՝ վարորդը պետք է խոչընդոտ չստեղծի երթևեկելի մասը հատող հետիոտների համար և պետք է ճանապարհը զիջի հեծանվային արահետով երթևեկող

հեծանվորդներին:

(87-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

88. Արգելվում է մուտք գործել խաչմերուկ, 1.26 գծանշմամբ նշված խաչմերուկի հատված, երթևեկելի մասերի կամ խաչմերուկի հատվածների հատում, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի:

(88-րդ կետը լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն, խմբ. 11.04.19 N 439-Ն, 19.01.23 N 71-Ն)

Կարգավորվող խաչմերուկներ

89. Այն խաչմերուկը, որտեղ երթևեկության հերթականությունը որոշվում է կարգավորողի կամ լուսացույցի ազդանշաններով, համարվում է կարգավորվող:

90. Լուսացույցի կանաչ ազդանշանի դեպքում ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի հանդիպակաց ուղղությունից ուղիղ և դեպի աջ ընթացող տրանսպորտային միջոցներին: Նույն կանոնով պետք է ղեկավարվեն նաև տրամվայների վարորդները միմյանց հետ:

91. Լուսացույցի դեղին կամ կարմիր ազդանշանի հետ միաժամանակ միացված լրացուցիչ սեկցիայի պաքի ուղղությամբ երթևեկող վարորդը պետք է ճանապարհը զիջի այլ ուղղություններից ընթացող տրանսպորտային միջոցներին:

92. Եթե կարգավորողի կամ լուսացույցի ազդանշանները թույլատրում են տրամվայի և ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների միաժամանակյա երթևեկություն, ապա, անկախ շարժման ուղղությունից, երթևեկության առավելություն ունի տրամվայի վարորդը: Սակայն լուսացույցի դեղին կամ կարմիր ազդանշանի հետ միաժամանակ միացված լրացուցիչ սեկցիայի պաքի ուղղությամբ երթևեկելու դեպքում տրամվայի վարորդը պետք է ճանապարհը զիջի այլ ուղղություններից մոտեցող տրանսպորտային միջոցներին:

(92-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

93. Լուսացույցի թույլատրող ազդանշանի դեպքում խաչմերուկ մուտք գործած վարորդը կարող է այն ազատել նախընտրած ուղղությամբ, սակայն պայմանով, որ դա չի խանգարի երթևեկության մյուս մասնակիցների շարժմանն այն ուղղությամբ, որով երթևեկությունը բաց է՝ անկախ ելքի լուսացույցի ազդանշանից, սակայն եթե խաչմերուկում տրանսպորտային միջոցի ընթացքի ուղղությամբ տեղադրված լուսացույցներից առաջ առկա է 1.12՝ «Կանգ-գիծ» գծանշումը (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշաններ), նա պետք է ղեկավարվի յուրաքանչյուր լուսացույցի ազդանշաններով:

(93-րդ կետը փոփ., լրաց. 11.04.19 N 439-Ն)

94. Վարորդը պետք է ճանապարհը զիջի երթևեկելի մասի հատումը դեռևս չավարտած տրանսպորտային միջոցներին և չխոչընդոտի հետիոտներին ավարտելու խաչմերուկի անցումը, եթե անգամ արդեն միացել է լուսացույցի թույլատրող ազդանշանը:

(94-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

Չկարգավորվող խաչմերուկներ

95. Այն խաչմերուկը, որտեղ բացակայում է լուսացույցը կամ կարգավորողը, չի աշխատում լուսացույցը, կամ միացված է լուսացույցի դեղին թարթող ազդանշանը, համարվում է չկարգավորվող:

96. Երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին՝ անկախ դրանց հետագա երթևեկության ուղղությունից: Այդպիսի խաչմերուկներում տրամվայը, անկախ երթևեկության ուղղությունից, առավելություն ունի հավասարազոր ճանապարհով հանընթաց կամ հանդիպակաց ուղղությամբ երթևեկող ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ:

(96-րդ կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

97. Եթե գլխավոր ճանապարհը խաչմերուկում փոխում է ուղղությունը, ապա դրանով ընթացող վարորդներն իրենց գործողություններում միմյանց նկատմամբ ղեկավարվում են հավասարազոր ճանապարհների խաչմերուկի անցման կանոններով: Նույն կանոններով միմյանց նկատմամբ պետք է ղեկավարվեն երկրորդական ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդները:

98. Հավասարազոր ճանապարհների խաչմերուկում, բացառությամբ Կանոնների 98.1-ին կետով նախատեսված դեպքերի ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին: Նույն կանոնով միմյանց նկատմամբ պետք է ղեկավարվեն նաև տրամվայների վարորդները: Այդպիսի խաչմերուկում տրամվայը, անկախ երթևեկության ուղղությունից, առավելություն ունի ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ:

(98-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն)

98.1. 4.3՝ «Շրջանաձև երթևեկություն» նշանով կահավորված շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ մուտք գործելիս տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել այդպիսի խաչմերուկում երթևեկող տրանսպորտային միջոցներին:

(98.1-ին կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

99. Ձախ շրջադարձի կամ հետադարձի ժամանակ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի հավասարազոր ճանապարհով հանդիպակաց ուղղությունից ուղիղ կամ դեպի աջ ընթացող

տրանսպորտային միջոցների վարորդներին:

100. Չկարգավորվող խաչմերուկներում տրամվայի վարորդը, անկախ երթևեկության ուղղությունից, երթևեկության առավելություն ունի հավասարագոր ճանապարհով համընթաց կամ հանդիպակաց ուղղությամբ ընթացող ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ:

(100-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

101. Երբ վարորդը չի կարող որոշել ճանապարհի ծածկույթի առկայությունը (օրվա մութ ժամանակ, ցեխ, ձյուն և այլն), և բացակայում են առավելության նշանները, ապա նա պետք է համարի, որ գտնվում է երկրորդական ճանապարհի վրա:

XI. ՀԵՏԻՈՏՆԱՅԻՆ ԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ

102. Կարգավորվող և չկարգավորվող հետիոտնային անցում հասկացությունները համանման են կարգավորվող և չկարգավորվող խաչմերուկ հասկացություններին, որոնք սահմանված են կանոնների 89-րդ և 95-րդ կետերով:

103. Տրանսպորտային միջոցի վարորդը չպետք է խոչընդոտ ստեղծի չկարգավորվող հետիոտնային անցումներով երթևեկելի մասը հատող հետիոտներին:

(103-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

104. Եթե որևէ տրանսպորտային միջոց չկարգավորվող հետիոտնային անցումից առաջ դանդաղեցրել է ընթացքը կամ կանգնել, ապա հարևան շարքերով ընթացող մյուս տրանսպորտային միջոցների վարորդները կարող են շարունակել երթևեկությունը՝ միայն համոզվելով, որ այդ տրանսպորտային միջոցի առջևում հետիոտներ չկան:

105. Կարգավորվող հետիոտնային անցումներում, լուսացույցի թույլատրող ազդանշանը միանալուց հետո վարորդը պետք է հնարավորություն տա հետիոտներին ավարտելու ընտրված ուղղությամբ երթևեկելի մասի հատումը:

106. Հետիոտնային անցումից հետո խցանում առաջանալու դեպքում արգելվում է մուտք գործել անցում, եթե դա կհարկադրի վարորդին կանգնել հետիոտնային անցման վրա:

107. Բոլոր դեպքերում, այդ թվում նաև՝ հետիոտնային անցումներից դուրս, վարորդը չպետք է խոչընդոտ ստեղծի երթևեկելի մասը հատող կույր հետիոտներին:

(107-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

108. Կույր հետիոտներն իրենց գործողությունների մասին պետք է ազդանշան տան սպիտակ ձեռնափայտով:

(108-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

XII. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԱՆՑՆԵՐՈՎ

109. Տրանսպորտային միջոցների վարորդները երկաթուղային գծերը կարող են հասել միայն երկաթուղային գծանցներով՝ ճանապարհը զիջելով գնացքին (լոկոմոտիվին, երկաթուղասայլակին):

110. Երկաթուղային գծանցին մոտենալիս վարորդը պետք է ղեկավարվի գծանցի հերթապահի ցուցումներով, երկաթուղային գծանցներով երթևեկությունը կարգավորելու համար նախատեսված լուսացույցների, նշանների, գծանշումների պահանջներով, ուղեփակոցի դիրքով և համոզվի, որ գծանցին գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) չի մոտենում:

111. Այն դեպքերում, երբ գծանցով երթևեկությունն արգելված է, վարորդը պետք է կանգնի 1.12՝ «Կանգ» գծի, 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելված է» նշանի կամ լուսացույցի մոտ, եթե դրանք բացակայում են՝ ուղեփակոցից ոչ պակաս, քան 5 մ, իսկ եթե բացակայում է նաև ուղեփակոցը, ապա մոտակա ռելսից ոչ պակաս, քան 10 մ հեռավորության վրա:

112. Գծանցի վրա հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը պետք է՝

- 1) անհապաղ իջեցնի ուղևորներին և միջոցներ ձեռնարկի գծանցն ազատելու համար.
- 2) հնարավորության դեպքում գծի երկայնքով երկու մարդ ուղարկի գծանցի ամեն մի կողմը 1000 մ հեռավորության վրա (եթե մեկին, ապա վատ տեսանելիության կողմը)՝ նրանց բացատրելով մոտեցող գնացքի մեքենավարին կանգառի ազդանշան տալու կարգը.

3) մնա տրանսպորտային միջոցի մոտ և տա ընդհանուր տագնապի ազդանշան.

(պարբերությունն ուժը կորցրել է 15.12.11 N 1798-Ն)

4) գնացք երևալու դեպքում վազի ընդառաջ՝ տալով կանգառի ազդանշան:

Ընդհանուր տագնապի ազդանշան է ծառայում իրար հետևից տրվող մեկ երկար և երեք կարճ ձայնային ազդանշանների համակցությունը, իսկ որպես մեքենավարին տրվող կանգառի ազդանշան ընդունված է ձեռքի շրջանաձև շարժումը (ցերեկը՝ վատ գույնի լաթով կամ որևէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով):

(112-րդ կետը փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն)

113. Վարորդին արգելվում է մուտք գործել գծանց՝

- 1) փակ կամ փակվող ուղեփակոցի դեպքում (լուսացույցի ազդանշանից անկախ).
- 2) լուսացույցի արգելող ազդանշանի դեպքում (ուղեփակոցի առկայությունից և դիրքից անկախ).
- 3) եթե գծանցից հետո առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգնել գծանցի վրա.
- 4) եթե տեսանելիության սահմաններում գծանցին մոտենում է գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ).

5) գծանցի հերթապահի արգելող ազդանշանի դեպքում:

Գծանցի հերթապահի արգելող ազդանշան է հանդիսանում հերթապահի կրծքով կամ մեջքով դեպի վարորդն ուղղված դիրքը, ցուցաձողը, կարմիր լապտերը կամ գլխից վեր բարձրացրած դրոշակը կամ կողմ պարզած ձեռքերը:

114. Վարորդին արգելվում է նաև՝

1) հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով՝ շրջանցել գծանցից առաջ կանգնած տրանսպորտային միջոցները.

2) ինքնակամ բացել ուղեփակոցը.

3) գծանցով փոխադրել ոչ տրանսպորտային վիճակում գտնվող գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ.

4) առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության գծանցով երթևեկել դանդաղությամբ մեքենաներով՝ 8 կմ/ժ ցածր արագությամբ և տափաններին հետ կցված տրակտորներով:

(114-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

XIII. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՎ

115. Ավտոմայրուղին 5.1՝ «Ավտոմայրուղի» ճանապարհային նշանի ազդանշան գոտում գտնվող ճանապարհ է, որը նույն մակարդակի վրա չունի հատումներ կամ հարակցումներ այլ ճանապարհների, երկաթուղային գծանցների կամ տրամվայի գծերի, հետիոտնային անցումների կամ հեծանվային արահետների հետ, չի սպասարկում ճանապարհամերձ տիրույթները և որում հանդիպակաց երթևեկելի մասերը բաժանված են բաժանարար գոտիով կամ ճանապարհային ցանկապատով: Ավտոմայրուղի համարվող ճանապարհի սկիզբը և վերջը նշվում են 5.1՝ «Ավտոմայրուղի» և 5.2՝ «Ավտոմայրուղու վերջը» նշաններով:

116. Ավտոմայրուղիներում արգելվում են՝

1) հետիոտների տեղաշարժը, բեռնակիր, հեծկան կամ այլ կենդանիներ քշելը.

2) հեծանիվների, մոպեդների, լծասայլերի (լծասահնակների), տրակտորների ու ինքնագնաց մեքենաների և այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց արագությունը, տեխնիկական բնութագրերից կամ վիճակից ելնելով, չի գերազանցում 40 կմ/ժ.

3) 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը՝ երկրորդ գոտուց ձախ գտնվող այլ գոտիով.

4) կանգառը՝ 6.4՝ «Կայանման տեղ» կամ 7.11՝ «Հանգստի վայր» նշաններով կահավորված կայանման հատուկ հարթակներից դուրս.

5) մուտքը բաժանարար գոտու տեխնոլոգիական խզվածքներ, բացառությամբ ճանապարհների պահպանման կամ մաքրման աշխատանքներ իրականացնող տրանսպորտային միջոցների.

6) հետընթացը.

7) ուսումնական վարումը:

(116-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն, փոփ. 15.12.11 N 1798-Ն)

117. Սույն բաժնի պահանջները տարածվում են նաև 5.3՝ «Ճանապարհ ավտոմոբիլների համար» նշանով կահավորված, իսկ 116-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ նաև ընդհանուր օգտագործման ճանապարհների վրա:

(117-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

XIV. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

118. Բնակելի գոտին կառուցապատված տարածք է, որի մուտքն ու ելքը նշված են 5.21՝ «Բնակելի գոտի» և 5.22՝ «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշաններով:

119. Բնակելի գոտում հետիոտների տեղաշարժը թույլատրվում է ինչպես մայթերով, այնպես էլ երթևեկելի մասով: Բնակելի գոտում հետիոտներն ունեն առավելություն, սակայն նրանք չպետք է անտեղի խոչընդոտեն տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

(119-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

120. Բնակելի գոտուց դուրս գալիս՝ վարորդները պետք է ճանապարհը զիջեն մյուս տրանսպորտային միջոցների վարորդներին և չստեղծեն խոչընդոտ հետիոտների համար:

(120-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

121. Բնակելի գոտիներում արգելվում են՝

1) ուսումնական վարումը.

2) միջանցիկ երթևեկությունը.

3) կայանելը՝ աշխատող շարժիչով.

4) 3,5 տ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների և ավտոբուսների (բացառությամբ միկրոավտոբուսների) կայանելը դրա համար նախատեսված և նշաններով կահավորված ու (կամ) գծանշված տեղերից դուրս:

122. Սույն բաժնի պահանջները տարածվում են նաև այն բակային տարածքների վրա, որոնք նշված չեն 5.21՝

«Բնակելի գոտի» ճանապարհային նշանով, սակայն ամբողջ պարագծով պարփակված են բնակելի շենքերով:

**XV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԳԱՌԻ ԿԵՏԵՐԻ ԱՆՑՈՒՄԸ
(վերնագիրը լրաց. 15.12.11 N 1798-Ն)**

123. Խաչմերուկներից դուրս, որտեղ տրամվայի գծերը հատում են երթևեկելի մասը, տրամվայն ունի առավելություն ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ բացառությամբ, երբ այն դուրս է գալիս դեպոյից:

124. 5.14՝ «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտի», 5.11.1՝ «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ», 5.13.1 և 5.13.2՝ «Ելք դեպի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ» նշաններով նշված, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտի ունեցող ճանապարհներին արգելվում է այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառն այդ գոտում: Եթե ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտին մնացած երթևեկելի մասից բաժանված է ընդհատվող գծանշմամբ, ապա, նման գոտիով ճանապարհ մուտք գործելիս, թույլատրվում է մտնել այդ գոտի՝ հարևան գոտի անհասպաղ վերադասավորվելու պայմանով: Թույլատրվում է նաև նման գծանշմամբ գոտիներ մուտք գործել ինչպես ուղևորներ իջեցնելու և նստեցնելու, այնպես էլ այդ ճանապարհից շրջադարձ կատարելու համար: Նշված գծանշմամբ գոտիներ մուտք գործելիս և դրանցից դուրս գալիս՝ վարորդները պետք է ճանապարհը զիջեն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդներին, ինչպես նաև չխոչընդոտեն նրանց երթևեկությունը՝ այդպիսի գոտիներում ուղևորներ իջեցնելիս և նստեցնելիս:

(124-րդ կետը լրաց., խմբ. 15.12.11 N 1798-Ն, փոփ. 11.04.19 N 439-Ն)

125. Բնակավայրերում կահավորված և նշված կանգառի կետերի տարածքից երթևեկությունն սկսող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդներն ունեն երթևեկության առավելություն, սակայն այն սկսել կարող են միայն՝ համոզվելով, որ հարևան գոտիով մոտեցող տրանսպորտային միջոցներն իրենց համար խոչընդոտ չեն ստեղծում:

(125-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

126. Վարորդները պետք է խոչընդոտ չստեղծեն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի կանգառի կետում կանգնած ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին մոտեցող կամ դրանից (դռների կողմից) հեռացող հետիոտներին, եթե իջնելն ու նստելը կատարվում է երթևեկելի մասից կամ երթևեկելի մասում գտնվող կանգառի հարթակից:

(126-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

XVI. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

127. Օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, անկախ ճանապարհի լուսավորվածությունից, ինչպես նաև թունելներում երթևեկող տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն հետևյալ լուսային սարքերը՝

1) բոլոր մեխանիկական տրանսպորտային միջոցների և մոպեդների վրա՝ լապտերների հեռահար կամ մոտակա լույսը, հեծանիվների վրա՝ լապտերները կամ լապտերիկները, իսկ լծասայլերի վրա՝ լապտերիկները (առկայության դեպքում):

2) կցորդների և քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցների վրա՝ եզրաչափային լույսերը:

128. Լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի՝

1) բնակավայրերում, եթե ճանապարհը լուսավորված է.

2) հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից 150 մ ոչ պակաս հեռավորության վրա, իսկ եթե այդ տրանսպորտային միջոցի վարորդը, պարբերաբար փոխարկելով լապտերների լույսը, տեղեկացնում է դրա անհրաժեշտության մասին, ապա ավելի մեծ հեռավորության վրա:

3) ցանկացած այլ դեպքերում՝ հանդիպակաց և համընթաց երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդներին շլացնելու հնարավորությունը բացառելու համար:

(128-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն, փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն)

129. Շլանալու դեպքում վարորդը պետք է միացնի վթարային լուսային ազդանշանը և չփոխել երթևեկության գոտին, իջեցնի արագությունը, իսկ անհրաժեշտության դեպքում կանգնի:

130. Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում, իսկ անբավարար տեսանելիության պայմաններում՝ անկախ ճանապարհի լուսավորվածությունից, կանգառի և կայանման դեպքում պետք է միացված լինեն տրանսպորտային միջոցի եզրաչափային լույսերը: Անբավարար տեսանելիության պայմաններում եզրաչափային լույսերի հետ լրացուցիչ կարող են միացվել նաև լապտերների մոտակա լույսերը, հակամառախուղային լապտերները կամ հետին հակամառախուղային լապտերիկները:

(130-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

131. Հետին հակամառախուղային լապտերիկները կարող են օգտագործվել միայն անբավարար տեսանելիության

պայմաններում:

132. Հակամատախուղային լապտերները երթևեկող տրանսպորտային միջոցների վրա կարող են օգտագործվել՝

1) օրվա մութ ժամանակ ճանապարհների չլուսավորված հատվածներում՝ մոտակա կամ հեռահար լույսերի հետ միաժամանակ.

2) անբավարար տեսանելիության պայմաններում՝ ինչպես առանձին, այնպես էլ լապտերների մոտակա կամ հեռահար լույսերի հետ միաժամանակ.

3) լապտերների մոտակա լույսի փոխարեն՝ կանոնների 133-րդ կետում նախատեսված դեպքերում:

(132-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

133. Օրվա լուսավոր ժամերին երթևեկող տրանսպորտային միջոցը նշելու նպատակով լապտերների մոտակա լույսը պետք է միացված լինի՝

1) մոտոցիկլների և մոպեդների վրա.

2) կազմակերպված տրանսպորտային շարապույնում երթևեկելիս.

3) հատուկ առանձնացված գոտիով, հիմնական հոսքին հանդիպակաց երթևեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա.

4) երեխաների խմբերի կազմակերպված փոխադրումներ կատարելիս.

5) մեծ եզրաչափերով, ծանրաքաշ, վտանգավոր բեռներ և չվնասագերծված տարա փոխադրելիս.

6) մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս (քարշակող տրանսպորտային միջոցի վրա):

134. Լապտեր-լուսարձակ և փնտրող լապտեր թույլատրվում է օգտագործել միայն բնակավայրերից դուրս՝ հանդիպակաց և համընթաց տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում: Բնակավայրերում այդպիսի լապտերներից կարող են օգտվել միայն սահմանված կարգով կապույտ կամ կապույտ և կարմիր առկայծող փարոսիկներով և հատուկ ձայնային ազդանշանով կահավորված տրանսպորտային միջոցների վարորդները՝ ծառայողական առաջադրանք կատարելիս:

(134-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

135. «Ավտոգնացք» ճանաչման նշանը պետք է միացված լինի երթևեկության մեջ գտնվող ավտոգնացքի վրա (բացառությամբ կցորդի հետ կցված թեթև մարդատար ավտոմոբիլների), իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, հաշվի առնելով կանոնների 130-րդ կետի պահանջները, նաև կանգառի և կայանման ժամանակ:

(135-րդ կետը փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն)

136. Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն՝

1) բնակավայրերից դուրս վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար.

2) այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:

137. Վազանցի մասին նախազգուշացնելու համար ձայնային ազդանշանի փոխարեն (կամ նրա հետ միաժամանակ) կարող է տրվել լուսային ազդանշան, որն իրենից ներկայացնում է օրվա լուսավոր ժամանակ լապտերների լույսի պարբերաբար միացումն ու անջատումը, իսկ օրվա մութ ժամանակ՝ լապտերների լույսի բազմակի փոխարկումները մոտակայից հեռահարի:

XVII. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՔԱՐՇԱԿՈՒՄԸ

138. Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակումը պետք է իրականացվի քարշակվող տրանսպորտային միջոցի ղեկին վարորդի առկայության դեպքում, բացի այն դեպքերից, երբ կոշտ կցիչի կառուցվածքն ուղղաձիգ երթևեկության ժամանակ ապահովում է քարշակվող տրանսպորտային միջոցի ընթացքը քարշակողի հետագծով:

139. Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ արգելվում է քարշակվող ավտոբուսում, տրոլեյբուսում և բեռնատար ավտոմոբիլի թափքում մարդկանց փոխադրումը: Մասնակի բեռնման եղանակով քարշակելիս՝ արգելվում է մարդկանց գտնվելն ինչպես քարշակվող տրանսպորտային միջոցի խցիկում կամ թափքում, այնպես էլ քարշակողի թափքում:

140. Քարշակող և քարշակվող տրանսպորտային միջոցների միջև պետք է ապահովվի՝ ճկուն կցիչով քարշակելիս 4-6 մ, իսկ կոշտ կցիչով՝ 4 մ ոչ ավելի հեռավորություն:

141. Մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս՝ ճկուն կապող օղակը նկատելի դարձնելու նպատակով այն պետք է կահավորվի նախազգուշակյան հարմարանքներով, որոնք անկյունագծով 50 մմ լայնությամբ իրար հաջորդող կարմիր և սպիտակ գույնի զոլերով, 200 x 200 մմ չափերի լուսանդրադարձիչ մակերևույթով դրոշակներ կամ վահանակներ են: Ճկուն կապող օղակի վրա պետք է տեղադրվեն երկուսից ոչ պակաս նախազգուշացնող հարմարանքներ:

142. Կոշտ կցման հարմարանքի կառուցվածքը պետք է համապատասխանի ստանդարտների պահանջներին:

143. Քարշակումն արգելվում է՝

1) երկու և ավելի մեխանիկական տրանսպորտային միջոցների.

2) առանց կողային կցորդի մոտոցիկլներով, ինչպես նաև դրանց.

3) մերկասառույցի պայմաններում՝ ճկուն կցիչով.

4) այն տրանսպորտային միջոցների, որոնց ապակեմաքրիչները և կառուցվածքով նախատեսված ապակեողորիչները չեն աշխատում՝ այն դեպքում, երբ քարշակվող տրանսպորտային միջոցի ղեկավարումն իրականացվում է վարորդի կողմից.

5) այն տրանսպորտային միջոցների, որոնց ղեկային կառավարումը չի գործում (բացառությամբ մասնակի բեռնամար եղանակով քարշակելիս).

6) այն տրանսպորտային միջոցի, որի արգելակային համակարգը չի գործում և դրա փաստացի գանգվածը գերազանցում է քարշակողի փաստացի գանգվածի կեսը: Քարշակվողի փաստացի գանգվածը քարշակողի փաստացի գանգվածի կեսից քիչ լինելու դեպքում քարշակումը թույլատրվում է միայն կոշտ կցիչով կամ մասնակի բեռնման եղանակով:

(143-րդ կետը փոփ. 20.11.08 N 1373-Ն)

144. Կանոնների 143-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում չգործող են համարվում ղեկային կառավարման և արգելակային այն համակարգերը, որոնք վարորդին թույլ չեն տալիս իրականացնել երթևեկության ուղղության փոփոխություն կամ կանգնեցնել տրանսպորտային միջոցը՝ անգամ նվազագույն արագությամբ երթևեկելիս:

(144-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

XVIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՄԸ

145. Տրանսպորտային միջոցների վարման սկզբնական ուսուցումը պետք է կատարվի փակ հրապարակներում կամ ավտոդրոմներում:

146. Ճանապարհներին ուսումնական վարումը թույլատրվում է միայն սովորեցնողի հետ: Սովորողը պետք է գիտենա և կարողանա կատարել կանոնների պահանջները:

(146-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

147. Անհատական կարգով սովորեցնողը պետք է իր մոտ ունենա տվյալ կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վարորդական վկայական:

148. Տրանսպորտային միջոց վարել սովորողը պետք է լինի առնվազն 16 տարեկան:

(148-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

149. Ուսումնական վարում թույլատրվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) սահմանած ճանապարհներին:

(149-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

XIX. ՄԱՐԴԿԱՆՑ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

150. «C» կարգի տրանսպորտային միջոցներով (բեռնատարներով) թույլատրվում է փոխադրել մինչև 8 ուղևոր, իսկ դրանից ավելի մարդ փոխադրելու դեպքում վարորդը պետք է ունենա նաև «D» կամ «DE» կարգերի կամ «D1» կամ «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վկայական:

(150-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

151. Մեկնելուց առաջ բեռնատար ավտոմոբիլի վարորդը պետք է ուղևորներին հրահանգավորի նստելու, թափքում տեղավորվելու և իջնելու կարգի, ինչպես նաև ընթացքի ժամանակ նստատեղը չըջելու մասին: Շարժվել կարելի է, միայն համոզվելով, որ ուղևորների անվտանգ փոխադրման պայմաններն ապահովված են:

(151-րդ կետը լրաց. 15.12.11 N 1798-Ն)

152. Բեռնատար ավտոմոբիլի թափքում, ինչպես նաև միջքաղաքային, զբոսաշրջության երթուղիներով երթևեկող կամ երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող ավտոբուսների սրահում մարդկանց թիվը չպետք է գերազանցի կահավորված նստատեղերի քանակը:

153. Մարդկանց փոխադրումը կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում թույլատրվում է, եթե այն կահավորված է կողի վերին եզրից առնվազն 0,3 մ-ից ցածր և հատակից՝ 0,3-0,5 մ բարձր ամրացված նստարաններով: Հետևի կամ կողերի երկայնքով ամրացված նստարանները պետք է ունենան ամուր թիկնակներ:

(153-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

154. Մարդկանց փոխադրելու համար չկահավորված կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլների թափքում երթևեկության ժամանակ թույլատրվում է գտնվել միայն բեռն ուղեկցող կամ այն ստանալու համար մեկնող անձանց՝ պայմանով, որ նրանք ապահովված են կանոնների 153-րդ կետով նախատեսված ցուցանիշներին համապատասխան տեղադրված նստատեղերով:

(154-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

155. Երեխաների խմբերի կազմակերպված փոխադրումը պետք է իրականացվի սույն Կանոններին, ինչպես նաև այդպիսի փոխադրումների կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կանոններին համապատասխան՝ «Երեխաների փոխադրում» ճանաչման նշաններով կահավորված ավտոբուսով:

(155-րդ կետը լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն, խմբ. 11.04.19 N 439-Ն)

156. «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով կահավորված տրանսպորտային միջոցներ երեխաների

նստեցման և իջեցման ժամանակ պետք է միացված լինի վթարային լուսային ազդանշանը: Այդ տրանսպորտային միջոցներին մոտենալիս՝ վարորդները պետք է նվազեցնեն արագությունը, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է կանգնեն՝ երեխաներին երթևեկելի մասն անարգել անցնել թույլ տալու համար:

(156-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն)

157. Վարորդը պետք է դռները փակ պահի մինչև տրանսպորտային միջոցի լրիվ կանգնելը, որից հետո միայն հնարավորություն տա ուղևորներին նստել կամ իջնել, իսկ երթևեկությունն սկսի դռները փակելուց հետո:

(157-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

158. Մարդկանց փոխադրումն արգելվում է՝

1) ավտոմոբիլի (բացի կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում և ֆուրգոն թափքում մարդկանց փոխադրելու դեպքերի), տրակտորի, այլ ինքնագնաց մեքենաների խցիկներից դուրս, բեռնատար կցորդում, կցորդ-ամառանոցում, բեռնատար մոտոտրանսպորտային միջոցի թափքում և մոտոցիկլի կառուցվածքով նախատեսված նստատեղերից դուրս.

2) տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով նախատեսված քանակից ավելի:

(158-րդ կետը փոփ. 15.12.11 N 1798-Ն)

159. Մինչև 7 տարեկան երեխաների փոխադրումը թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում, որոնց կառուցվածքով նախատեսված են անվտանգության գոտիներ կամ անվտանգության գոտիներ և «ISOFIX» մանկական պահող համակարգ, պետք է իրականացվի երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով:

(159-րդ կետը խմբ. 15.12.11 N 1798-Ն, 11.04.19 N 439-Ն)

159.1. 7-ից մինչև 12 տարեկան երեխաների փոխադրումը թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում, որոնց կառուցվածքով նախատեսված են անվտանգության գոտիներ կամ անվտանգության գոտիներ և «ISOFIX» մանկական պահող համակարգ, պետք է իրականացվի երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով կամ անվտանգության ամրագոտիների օգտագործման միջոցով, իսկ թեթև մարդատար ավտոմոբիլի առջևի նստատեղում՝ միայն երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով:

(159.1-ին կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

159.2. Թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում մանկական պահող համակարգերի (սարքերի) տեղադրումն ու դրանցում երեխաներին տեղավորումը պետք է իրականացվեն նշված համակարգերի (սարքերի) շահագործման հրահանգներին (կանոններին) համապատասխան:

(159.2-րդ կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

159.3. Արգելվում է մինչև 12 տարեկան երեխաներին փոխադրել մոտոցիկլի հետևի նստատեղին, ինչպես նաև բեռնատար ավտոմոբիլի թափքում (բացառությամբ ֆուրգոն թափքով ավտոմոբիլի):

(159.3-րդ կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

XX. ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

160. Փոխադրվող բեռի զանգվածը և ըստ տոնների բեռնվածության բաշխումը չպետք է գերազանցեն արտադրող գործարանի կողմից տվյալ տրանսպորտային միջոցի համար սահմանված մեծությունները:

161. Շարժումն սկսելուց առաջ և երթևեկության ընթացքում վարորդը պետք է հսկի բեռի վիճակը, տեղաբաշխումն ու ամրացումը՝ վայր ընկնելուց և որևէ այլ կերպ երթևեկության խոչընդոտ ստեղծելուց խուսափելու համար:

162. Տրանսպորտային միջոցի առջևի կամ հետևի եզրաչափերից 1մ ավելի կամ կողքից՝ եզրաչափային լույսի արտաքին եզրից 0,4 մ ավելի դուրս ցցվելու դեպքում օրվա լուսավոր ժամերին բեռը պետք է նշվի «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչով:

(162-րդ կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն)

163. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հատուկ կանոններով են կարգավորվում այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը՝

1) որոնք օգտագործվում են ծանրաքաշ, վտանգավոր բեռներ կամ չվնասազերծված տարա փոխադրելու համար.

2) որոնք շահագործվում են երկու և ավելի կցորդների հետ միասին՝ ավտոգնացքի կազմում.

3) որոնց եզրաչափերը (կամ դրանցից որևէ մեկը), բեռով կամ առանց բեռի, գերազանցում են՝

ա. ըստ լայնության՝ 2,55 մ (իզոթերմիկ կամ սառնարանային թափքով տրանսպորտային միջոցների համար՝ 2,6 մ),

բ. ըստ երկարության՝ 12 մ, իսկ մեկ կցորդով (կիսակցորդով)՝ 20 մ,

գ. ըստ բարձրության (երթևեկելի մասի մակերևույթից)՝ 4 մ.

4) որոնց բեռը դուրս է ցցված հետևի եզրաչափից ավելի քան 2 մ:

(163-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն)

164. Բեռի փոխադրումն արգելվում է, եթե այն՝

1) սահմանափակում է վարորդի տեսողաշտը.

2) դժվարացնում է տրանսպորտային միջոցի ղեկավարումը և թուլացնում կայունությունը.

3) ծածկում է արտաքին լուսային սարքերն ու լուսանդարձիչները, համարանիշերը կամ ճանաչման նշանները, ինչպես նաև խանգարում ձեռքով տրվող ազդանշանների ընկալմանը:

4) զգալի աղմուկ է հանում, փոշի բարձրացնում կամ աղտոտում ճանապարհն ու շրջակա միջավայրը:

165. Եթե բեռի վիճակն ու դասավորությունը հնարավորություն չեն տալիս կատարել դրա փոխադրումը կանոնների պահանջներին համապատասխան, ապա վարորդը պետք է միջոցներ ձեռնարկի խախտումները վերացնելու համար կամ դադարեցնի հետագա երթևեկությունը:

XXI. ՃԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ (N 1 ՁԵՎ), ՃԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ԳԾԱՆՇՈՒՄԸ (N 2 ՁԵՎ) ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ (N 3 ՁԵՎ)

166. Ճանապարհային նշանները, գծանշումները և դրանց համարակալումները համապատասխանում են ստանդարտներին:

167. Ճանապարհային նշանները բաժանվում են 8 խմբի՝

- 1) նախագրուչացնող.
- 2) առավելության.
- 3) արգելող.
- 4) թելադրող.
- 5) հատուկ թելադրանքի.
- 6) տեղեկատվության.
- 7) սպասարկման.
- 8) լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ):

167.1. Շարժական կանգնակների վրա տեղադրված 1.8՝ «Լուսացուցային կարգավորում», 1.15՝ «Սայթաքուն ճանապարհ», 1.16՝ «Անհարթ ճանապարհ», 1.18՝ «Խճի արտանետում», 1.19՝ «Վտանգավոր կողմակ», 1.20.1-1.20.3՝ «Ճանապարհի նեղացում», 1.21՝ «Երկկողմ երթևեկություն», 1.33՝ «Այլ վտանգներ», 2.6՝ «Հանդիպակաց երթևեկության առավելություն», 3.11՝ «Զանգվածի սահմանափակում», 3.12՝ «Սոնու վրա բեռնվածության սահմանափակում», 3.13՝ «Բարձրության սահմանափակում», 3.14՝ «Լայնության սահմանափակում», 3.15՝ «Երկարության սահմանափակում», 3.16՝ «Նվազագույն միջտարածության սահմանափակում», 3.18.1՝ «Աջ շրջադարձն արգելվում է», 3.18.2՝ «Զախ շրջադարձն արգելվում է», 3.19՝ «Հետադարձն արգելվում է», 3.20՝ «Վազանցն արգելվում է», 3.21՝ «Վազանցի արգելման գոտու վերջ», 3.22՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցն արգելվում է», 3.23՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ», 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում», 3.25՝ «Առավելագույն արագության սահմանափակման գոտու վերջ» ժամանակավոր նշանների սպիտակ հիմնագույնը կարող է լինել դեղին:

(167.1-ին կետը լրաց. 11.04.19 N 439-Ն)

168. Ճանապարհային գծանշումները կիրառվում են ինքնուրույն կամ ճանապարհային նշանների և լուսացույցների հետ միասին:

169. Ճանապարհային գծանշումները բաժանվում են 2 խմբի՝

- 1) հորիզոնական.
- 2) ուղղաձիգ:

170. Հորիզոնական գծանշումը երթևեկելի մասի վրա գծեր, պաքներ, գրառումներ և այլ նշումներ են ու սահմանում են երթևեկության որոշակի ռեժիմ և կարգ: Հորիզոնական գծանշումը լինում է՝

- 1) մշտական, որը սպիտակ գույնի է, բացի՝
ա. 1.4-րդ, 1.10-րդ, 1.14.1-ին, 1.14.2-րդ, 1.17-րդ, 1.26-րդ գծանշումներից, որոնք դեղին գույնի են,
բ. *(պարբերությունն ուժը կորցրել է 27.10.22 N 1650-Ն)*
- 2) ժամանակավոր, որը նարնջագույն է:

(170-րդ կետը խմբ. 07.06.12 N 737-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, լրաց., փոփ. 27.10.22 N 1650-Ն)

171. Ուղղաձիգ գծանշումը ճանապարհային կառույցների և կահավորման տարրերի վրա սև ու սպիտակ կամ կապույտ ու սպիտակ կամ կարմիր ու սպիտակ գույների գույնակցություն է, որը ցույց է տալիս դրանց եզրաչափերը և ծառայում որպես տեսողական կողմնորոշման միջոց:

(171-րդ կետը խմբ. 07.06.12 N 737-Ն)

172. Եթե հաստատուն տեղադրված նշանների պահանջները հակասում են շարժական կանգնակների վրա տեղադրված ժամանակավոր նշանների պահանջներին, ապա երթևեկության մասնակիցները պետք է դեկավարվեն ժամանակավոր նշաններով:

173. Եթե լուսացույցի ազդանշանների նշանակությունները հակասում են առավելության նշանների պահանջներին, ապա վարորդները պետք է դեկավարվեն լուսացույցի ազդանշաններով:

174. Եթե գծանշման պահանջները հակասում են շարժական կանգնակի վրա տեղադրված ժամանակավոր նշանների պահանջներին, ապա երթևեկության մասնակիցները պետք է դեկավարվեն այդ նշաններով: Եթե ժամանակավոր և մշտական գծանշումների պահանջներն իրար հակասում են, ապա վարորդները պետք է դեկավարվեն ժամանակավոր գծանշման պահանջներով:

175. Տրանսպորտային միջոցների վրա անհրաժեշտության դեպքում պետք է տեղադրվեն կամ պատկերվեն

տրանսպորտային միջոցի ճանաչման նշաններ: Բացի «Բժիշկ» և «Հաշմանդամ» ճանաչման նշաններից, որոնք տեղադրվում են վարորդի ցանկությամբ, մյուս բոլոր ճանաչման նշանների տեղադրումը պարտադիր է, եթե առկա է դրանցով նշվող հանգամանքը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Ձև N 1

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Յ Ի Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

1. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐ (նկար 2)

Նախագգուշացնող նշանները տեղեկացնում են ճանապարհի այն վտանգավոր տեղամասին մոտենալու մասին, որով երթևեկելիս (տեղաշարժվելիս) անհրաժեշտ է ձեռնարկել իրադրությանը համապատասխան միջոցներ: Դրանք են՝

- 1.1. «Երկաթուղային գծանց՝ ուղեփակոցով».
- 1.2. «Երկաթուղային գծանց՝ առանց ուղեփակոցի».
- 1.3.1. «Միագիծ երկաթուղի», 1.3.2. «Բազմագիծ երկաթուղի». ուղեփակոցով չկահավորված երկաթուղային գծանցի նշում՝ 1.3.1՝ մեկ ուղիով, 1.3.2՝ երկու և ավելի ուղիներով.
- 1.4.1-1.4.6. «Մոտեցում երկաթուղային գծանցին». լրացուցիչ նախագգուշացում բնակավայրերից դուրս երկաթուղային գծանցին մոտենալու մասին.
- 1.5. «Հատում տրամվայի գծի հետ».
- 1.6. «Հավասարագոր ճանապարհների հատում».
- 1.7. «Հատում շրջանաձև երթևեկության հետ».
- 1.8. «Լուսացուցային կարգավորում». խաչմերուկ, հետիոտնային անցում կամ ճանապարհի տեղամաս, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսացույցով.
- 1.9. «Բացվող կամուրջ». բացվող կամուրջ կամ լաստանավային անցում.
- 1.10. «Ելք դեպի առափ». առափ կամ ափ դուրս գալու տեղ.
- 1.11.1, 1.11.2. «Վտանգավոր շրջադարձ». փոքր շառավիղով կամ սահմանափակ տեսադաշտով ճանապարհի կորացում՝ 1.11.1՝ դեպի աջ, 1.11.2՝ դեպի ձախ.
- 1.12.1, 1.12.2. «Վտանգավոր շրջադարձեր». վտանգավոր շրջադարձերով ճանապարհի հատված՝ 1.12.1՝ առաջին շրջադարձը դեպի աջ, 1.12.2՝ առաջին շրջադարձը դեպի ձախ.
- 1.13. «Կտրուկ վայրէջք».
- 1.14. «Կտրուկ վերելք».
- 1.15. «Սայթաքուն ճանապարհ». առավել սայթաքուն երթևեկելի մասով ճանապարհի հատված.
- 1.16. «Անհարթ ճանապարհ». երթևեկելի մասի անհարթություններով ճանապարհի հատված (ալիքավորություն, խանդակներ, կամուրջների հետ ոչ սահուն լծորդումներ և այլն).
- 1.17. «Արհեստական անհարթություն». արագությունը հարկադրաբար իջեցնելու համար արհեստական անհարթությամբ (անհարթություններով) ճանապարհի հատված.
- 1.18. «Խճի արտանետում». ճանապարհի հատված, որտեղ տրանսպորտային միջոցների անիվների տակից հնարավոր է խճի, քարակտորների և այլնի արտանետում.
- 1.19. «Վտանգավոր կողնակ». ճանապարհի հատված, որտեղ կողնակ դուրս գալը վտանգավոր է.
- 1.20.1-1.20.3. «Ճանապարհի նեղացում». 1.20.1՝ նեղացում երկու կողմից, 1.20.2՝ աջից, 1.20.3՝ ձախից.
- 1.21. «Երկկողմ երթևեկություն». ճանապարհի (երթևեկելի մասի) հանդիպակաց երթևեկությամբ հատվածի սկիզբ.
- 1.22. «Հետիոտնային անցում». 5.19.1 և 5.19.2՝ «Հետիոտնային անցում» նշաններով և (կամ) 1.14.1-1.14.2 գծանշմամբ նշված հետիոտնային անցում.
- 1.23. «Երեխաներ». մանկական հիմնարկների (դպրոցներ, մանկապարտեզներ և այլն) մոտով անցնող ճանապարհի հատված, որի երթևեկելի մասում հնարավոր է երեխաների հայտնվելը.
- 1.24. «Հատում հեծանվային արահետի հետ».
- 1.25. «Ճանապարհային աշխատանքներ».
- 1.26. «Անասունների քշում».
- 1.27. «Վայրի կենդանիներ».
- 1.28. «Քարերի անկում». ճանապարհի հատված, որտեղ հնարավոր են փլուզումներ, սողանք, քարերի անկում.
- 1.29. «Կողային քամի».
- 1.30. «Ցածրաթռիչք ինքնաթիռներ».
- 1.31. «Թունել». թունել, որտեղ բացակայում է արհեստական լուսավորությունը, կամ թունել, որի ճակատամուտքի տեսանկյունից սահմանափակ է.
- 1.32. «Խցանում». ճանապարհի հատված, որտեղ առաջացել է խցանում.

1.33. «Այլ վտանգներ». ճանապարհի հատված, որտեղ առկա են թվարկված նախագրուչացնող նշաններով չնախատեսված վտանգներ.

1.34.1, 1.34.2. «Շրջադարձի ուղղություն». սահմանափակ տեսանելիությանը ճանապարհի փոքր շառավղով կորացման վրա երթևեկության ուղղություն. ճանապարհի նորոգվող հատվածի շրջանցման ուղղություն.

1.34.3. «Շրջադարձի ուղղություն». T-աձև խաչմերուկում կամ ճանապարհի ճյուղավորման վրա երթևեկության ուղղություններ. ճանապարհի նորոգվող հատվածի շրջանցման ուղղություններ.

1.35. (պարբերությունն ուժը կորցրել է 15.12.11 N 1798-Ն)

1.35. «Խաչմերուկի հատված». Նշանակում է մոտեցում խաչմերուկին, որի հատվածը նշված է 1.26 գծանշմամբ, և որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի:

1.1, 1.2 և 1.5-1.33. նշանները տեղադրվում են մինչև վտանգավոր հատվածի սկիզբը՝ բնակավայրերից դուրս՝ 150-300 մ, իսկ բնակավայրերում՝ 50-100 մ հեռավորության վրա: Անհրաժեշտության դեպքում նշանները կարող են տեղադրվել և այլ հեռավորության վրա: Այդ դեպքում հեռավորությունը նշվում է 8.1.1՝ «Հեռավորությունը մինչև օբյեկտ» ցուցանակի վրա:

1.1, 1.2, 1.9, 1.10, 1.23 և 1.25 նշանները բնակավայրերից դուրս կրկնվում են: Կրկնվող երկրորդ նշանը տեղադրվում է վտանգավոր հատվածի սկզբից 50 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա: 1.23 և 1.25 նշանները կրկնվում են նաև բնակավայրերում՝ վտանգավոր տեղամասից անմիջապես առաջ:

1.13 և 1.14 նշանները կարող են տեղադրվել առանց 8.1.1՝ «Հեռավորությունը մինչև օբյեկտ» ցուցանակի, անմիջապես վայրէջքից կամ վերելքից առաջ, եթե վայրէջքները և վերելքները միմյանց հաջորդում են:

1.25 նշանը, երթևեկելի մասի վրա կարճատև աշխատանքներ կատարելիս, կարող է տեղադրվել առանց 8.1.1՝ «Հեռավորությունը մինչև օբյեկտ» ցուցանակի, աշխատանքի կատարման վայրից 10-15 մ հեռավորության վրա:

1.32 նշանը կիրառվում է որպես ժամանակավոր նշան կամ փոփոխական պատկերով նշանների վրա՝ խաչմերուկից առաջ, որտեղից հնարավոր է շրջանցել ճանապարհի այն հատվածը, որտեղ առաջացել է խցանում:

1.35 նշանը տեղադրվում է խաչմերուկի սահմանին: Եթե բարդ խաչմերուկներում հնարավոր չէ ճանապարհային նշանը տեղադրել խաչմերուկի սահմանին, ապա այն տեղադրում են խաչմերուկի սահմանից ոչ ավել, քան 30 մ հեռավորության վրա:

(գլուխը փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն, լրաց., խմբ. 11.04.19 N 439-Ն, փոփ. 19.01.23 N 71-Ն)

2. ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ (նկար 3)

Առավելության նշանները սահմանում են խաչմերուկներով, երթևեկելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհների նեղ հատվածներով անցման հերթականությունը: Դրանք են՝

2.1. «Գլխավոր ճանապարհ». ճանապարհ, որով երթևեկողներին չկարգավորվող խաչմերուկների անցման առավելություն է տրվում.

2.2. «Գլխավոր ճանապարհի վերջ».

2.3.1. «Հատում երկրորդական ճանապարհի հետ».

2.3.2-2.3.7. «Երկրորդական ճանապարհի հարում». 2.3.2, 2.3.4, 2.3.6՝ հարում աջից, 2.3.3, 2.3.5, 2.3.7՝ հարում ձախից.

2.3.8-2.3.11. «Երկրորդական ճանապարհների հարում». 2.3.8՝ հարումներ աջից, 2.3.10՝ հարումներ ձախից, 2.3.9՝ հարում աջից, այնուհետև ձախից, 2.3.11՝ հարում ձախից, այնուհետև աջից.

2.4. «Զիջեք ճանապարհը». վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով, իսկ 8.13՝ «Գլխավոր ճանապարհի ուղղություն» ցուցանակի առկայության դեպքում՝ գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին.

2.5. «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է». արգելվում է երթևեկել առանց «Կանգ» գծից առաջ (դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի եզրից առաջ) կանգնելու: Վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով, իսկ 8.13՝ «Գլխավոր ճանապարհի ուղղություն» ցուցանակի առկայության դեպքում՝ գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին: Եթե 2.5 նշանը տեղադրված է երկաթուղային գծանցից կամ կարանտինային պահակետից առաջ, ապա վարորդը պետք է կանգնի «Կանգ» գծից առաջ, իսկ դրա բացակայության դեպքում՝ նշանից առաջ.

2.6. «Հանդիպակաց երթևեկության առավելություն». արգելվում է մուտք գործել ճանապարհի նեղ հատված, եթե դա կարող է դժվարացնել հանդիպակաց երթևեկությունը: Վարորդը պետք է ճանապարհը զիջի նեղ հատվածին հանդիպակաց կողմից մոտեցող տրանսպորտային միջոցներին.

2.7. «Առավելություն հանդիպակաց երթևեկության նկատմամբ». ճանապարհի նեղ հատված, որով երթևեկելիս վարորդն առավելություն ունի հանդիպակաց տրանսպորտային միջոցների նկատմամբ:

(գլուխը խմբ. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 19.01.23 N 71-Ն)

3. ԱՐԳԵԼՈՂ ՆՇԱՆՆԵՐ (նկար 4)

Արգելող նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի սահմանափակումներ: Դրանք են՝

3.1. «Մուտքն արգելվում է». արգելվում է տրանսպորտային միջոցների մուտքը տվյալ ուղղությամբ.

3.2. «Երթևեկությունն արգելվում է». արգելվում է բոլոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը.

3.3. «Մեխանիկական տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելվում է».

3.4. «Բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունն արգելվում է». արգելվում է 3.5 տոննայից ավելի (եթե նշանի վրա զանգվածը չի նշված) կամ նշանի վրա նշվածից մեծ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների և տրանսպորտային միջոցների շարժակազմերի, ինչպես նաև տրակտորների և ինքնագնաց մեքենաների երթևեկությունը.

3.5. «Մոտոցիկլների երթևեկությունն արգելվում է».

3.6. «Տրակտորների երթևեկությունն արգելվում է». արգելվում է տրակտորների և ինքնագնաց մեքենաների երթևեկությունը.

3.7. «Կցորդով երթևեկությունն արգելվում է». արգելվում է ցանկացած տեսակի կցորդով բեռնատար ավտոմոբիլների և տրակտորների երթևեկությունը, ինչպես նաև մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը.

3.8. «Լծասայլերի երթևեկությունն արգելվում է». արգելվում է լծասայլերի (լծասահնակների), հեծկան կամ բեռնակիր կենդանիներով երթևեկությունը և անասուններ քշելը.

3.9. «Հեծանիվներով երթևեկությունն արգելվում է». արգելվում է մոպեդներով և հեծանիվներով երթևեկությունը.

3.10. «Հետիոտների տեղաշարժն արգելվում է».

3.11. «Զանգվածի սահմանափակում». արգելվում է այն տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ավտոգնացքների) երթևեկությունը, որոնց ընդհանուր փաստացի զանգվածը մեծ է նշանի վրա նշվածից.

3.12. «Սոնու վրա բեռնվածության սահմանափակում». արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց որևէ առում վրա բեռնվածությունը մեծ է նշանի վրա նշվածից.

3.13. «Բարձրության սահմանափակում». արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց եզրաչափային բարձրությունը (բեռով կամ առանց բեռի) ավելի է նշանի վրա նշվածից.

3.14. «Լայնության սահմանափակում». արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց եզրաչափային լայնությունը (բեռով կամ առանց բեռի) ավելի է նշանի վրա նշվածից.

3.15. «Երկարության սահմանափակում». արգելվում է այն տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ավտոգնացքների) երթևեկությունը, որոնց եզրաչափային երկարությունը (բեռով կամ առանց բեռի) ավելի է նշանի վրա նշվածից.

3.16. «Նվազագույն միջտարածության սահմանափակում». արգելվում է տրանսպորտային միջոցների երթևեկությունը, եթե դրանց միջև տարածությունը փոքր է նշանի վրա նշվածից.

3.17.1. «Մաքսային կետ». արգելվում է առանց կանգառի անցումը մաքսային կետի մոտով.

3.17.2. «Վտանգ». արգելվում է բոլոր տրանսպորտային միջոցների հետագա երթևեկությունը ճանապարհատրանսպորտային պատահարի, հրդեհի, վթարի և այլ վտանգի կապակցությամբ, բացառությամբ ոստիկանության, շտապ բժշկական օգնության, փրկարարական և վտանգի վերացման նպատակով ժամանած այլ ծառայությունների տրանսպորտային միջոցների, երթևեկությունը շարունակել կարելի է միայն թույլտվություն ստանալուց հետո.

3.17.3. «Հսկիչ կետ». արգելվում է առանց կանգառի անցումը հսկիչ կետով.

3.18.1. «Աջ շրջադարձն արգելվում է».

3.18.2. «Զախ շրջադարձն արգելվում է».

3.19. «Հետադարձն արգելվում է».

3.20. «Վազանցն արգելվում է». արգելվում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով վազանցի կատարումը: Թույլատրվում է վազանցել դանդաղությամբ տրանսպորտային միջոցները, լծասայլերը, առանց կողային կցորդի երկանիվ մոտոցիկլները, մոպեդները և հեծանիվները.

3.21. «Վազանցի արգելման գոտու վերջ».

3.22. «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցն արգելվում է». բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով վազանցն արգելվում է՝ բացառությամբ մոտոցիկլների, թեթև մարդատար ավտոմոբիլների, ավտոբուսների և մինչև 3,5 տոննա թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների.

3.23. «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ».

3.24. «Առավելագույն արագության սահմանափակում». արգելվում է նշանի վրա նշվածից բարձր արագությամբ (կմ/ժ) երթևեկելը.

3.25. «Առավելագույն արագության սահմանափակման գոտու վերջ».

3.26. «Զայնային ազդանշան տալն արգելվում է». արգելվում է օգտվել ճայնային ազդանշաններից՝ բացի այն դեպքերից, երբ այն տրվում է ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար.

3.27. «Կանգառն արգելվում է». արգելվում են տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը.

3.28. «Կայանելն արգելվում է». արգելվում է տրանսպորտային միջոցների կայանումը.

3.29. «Կայանելն արգելվում է ամսվա կենտ օրերին».

3.30. «Կայանելն արգելվում է ամսվա գույգ օրերին»։ 3.29 և 3.30 նշանների միաժամանակյա կիրառման դեպքում տրանսպորտային միջոցները ճանապարհի մի կողմից մյուսը տեղափոխվում են ժամը 19.00 - 21.00-ի սահմաններում.

3.31. «Բոլոր սահմանափակումների գոտու վերջ»։ նշում է 3.16, 3.20, 3.22, 3.24 և 3.26 - 3.30 նշաններից մի քանիսի ազդման գոտիների միաժամանակյա վերջը.

3.32. «Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելվում է»։ արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնք կահավորված են «Վտանգավոր բեռ» ճանաչման նշանով.

3.33. «Պայթուցիկ և դյուրավառ բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելվում է»։ արգելվում է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնք կահավորված են «Վտանգավոր բեռ» ճանաչման նշանով և նախատեսված են 1, 2.2 - 2.4, 3.1, 3.2 և 5.2 դասերի վտանգավոր բեռներ փոխադրելու համար (ըստ ստանդարտի).

3.2 - 3.9, 3.32 և 3.33 նշանները երկու ուղղությամբ էլ արգելում են համապատասխան տեսակների տրանսպորտային միջոցների երթևեկությունը:

Նշանների ազդեցությունը չի տարածվում՝

3.1 - 3.3, 3.18.1, 3.18.2, 3.19՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա.

3.2 - 3.8՝ «տաքսի» ավտոմոբիլների, ճանապարհների շինարարության, վերանորոգման, պահպանման կամ մաքրման, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների սպասարկման և նորոգման, անսարք, վթարված և այլ տրանսպորտային միջոցների բարձման ու փոխադրման աշխատանքներ իրականացնող, ինչպես նաև գունազծապատկերներ ունեցող փոստային հատուկ կապի և այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք սպասարկում են նշանների ազդման գոտում գտնվող օբյեկտները, ինչպես նաև պատկանում կամ սպասարկում են նշված գոտում բնակվող կամ աշխատող քաղաքացիներին: Այդ դեպքերում տրանսպորտային միջոցները պետք է նշված գոտի մուտք գործեն և այնտեղից դուրս գան օբյեկտին մոտակա խաչմերուկից.

3.2, 3.3, 3.28 - 3.30՝ I և II խմբերի հաշմանդամների կողմից ղեկավարվող կամ I-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա փոխադրող տրանսպորտային միջոցների վրա.

3.28 - 3.30՝ գունազծապատկերներ ունեցող փոստային հատուկ կապի տրանսպորտային միջոցների, ինչպես նաև միացված հաշվիչով «տաքսի» ավտոմոբիլների վրա:

Նշանների ազդեցությունը տարածվում է՝

3.10, 3.27 - 3.30՝ ճանապարհի միայն այն կողմի վրա, որտեղ դրանք տեղադրված են.

3.16, 3.20, 3.22, 3.24 և 3.26 - 3.30՝ նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհների մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն.

3.18.1 և 3.18.2՝ երթևեկելի մասերի այն հատման վրա, որից առաջ նշանը տեղադրված է.

3.24 (տեղադրված մինչև 5.23.1 կամ 5.23.2 նշաններով նշված բնակավայրը)՝ մինչև 5.23.1 կամ 5.23.2՝

«Բնակավայրի սկիզբ» նշանը:

Նշանների ազդման գոտին կարող է նվազեցվել՝

3.16 և 3.26 նշանների համար՝ 8.2.1՝ «Ազդման գոտի» ցուցանակի կիրառմամբ.

3.20, 3.22 և 3.24 նշանների համար՝ դրանց ազդման գոտու վերջում՝ համապատասխանաբար 3.21, 3.23 և 3.25 նշանների տեղադրմամբ կամ 8.2.1՝ «Ազդման գոտի» ցուցանակի կիրառմամբ.

3.24 նշանի համար՝ երթևեկության առավելագույն արագության այլ մեծությամբ նույն՝ 3.24 նշանի տեղադրմամբ.

3.27 - 3.30 նշանների համար՝ 8.2.2՝ «Ազդման գոտի» ցուցանակի կիրառմամբ կամ այդ նշանների ազդման գոտու վերջում 8.2.3՝ «Ազդման գոտի» ցուցանակով կրկնակի տեղադրված համապատասխանաբար նույն՝ 3.27 - 3.30 նշաններով.

3.27 նշանը կարող է կիրառվել 1.4 գծանշման, իսկ 3.28 նշանը՝ 1.10 գծանշման հետ համատեղ, ընդ որում, նշանների ազդման գոտին որոշվում է գծանշման երկարությամբ:

(գլուխը փոփ., լրաց. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն, փոփ. 20.12.12 N 1599-Ն)

4. ԹԵԼԱԴՐՈՂ ՆՇԱՆՆԵՐ (նկար 5)

Թելադրող նշանները ցույց են տալիս երթևեկության թույլատրելի ուղղությունները, նվազագույն արագությունը, ինչպես նաև հետխոտների և որոշ տրանսպորտային միջոցների վարորդների համար նախատեսում են երթևեկության ուղղությունները: Դրանք են՝

4.1.1՝ «Երթևեկությունն ուղիղ», 4.1.2՝ «Երթևեկությունը դեպի աջ», 4.1.3՝ «Երթևեկությունը դեպի ձախ», 4.1.4՝ «Երթևեկությունն ուղիղ կամ դեպի աջ», 4.1.5՝ «Երթևեկությունն ուղիղ կամ դեպի ձախ», 4.1.6՝ «Երթևեկությունը դեպի աջ կամ դեպի ձախ». թույլատրվում է երթևեկել միայն նշանների վրա պլաքներով ցույց տրված ուղղություններով: Ձախ շրջադարձ թույլատրող նշանները թույլատրում են նաև հետադարձը (4.1.1 - 4.1.6 նշանները կարող են կիրառվել տվյալ հատման վայրում երթևեկության ուղղությունների ձևի պլաքների տեսքով).

4.1.1 - 4.1.6 նշանների ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա.

4.1.1 - 4.1.6 նշանների ազդեցությունը տարածվում է երթևեկելի մասերի այն հատման վրա, որից առաջ տեղադրված

է նշանը:

Ճանապարհի հատվածի սկզբում տեղադրված 4.1.1 նշանի ազդեցությունը տարածվում է մինչև մոտակա խաչմերուկը: Նշանը չի արգելում աջ շրջադարձը դեպի բակեր և ճանապարհին մերձակա այլ տարածքներ.

4.2.1՝ «Արգելի շրջանցումն աջից», 4.2.2՝ «Արգելի շրջանցումը ձախից». շրջանցումը թույլատրվում է միայն սլաքով ցույց տրված կողմից.

4.2.3. «Արգելի շրջանցումն աջից կամ ձախից». շրջանցումը թույլատրվում է ինչպես աջ, այնպես էլ ձախ կողմից.

4.3. «Շրջանաձև երթևեկություն». երթևեկությունը թույլատրվում է սլաքներով ցույց տրված ուղղությամբ.

4.4.1 «Հեծանվային արահետ». թույլատրվում է երթևեկել միայն մուպեդներով և հեծանիվներով: Մայթի կամ հետիոտնային արահետի բացակայության դեպքում հեծանվային արահետով կարող են երթևեկել նաև հետիոտները.

4.4.2. «Հեծանվային արահետի վերջ».

4.5.1 «Հետիոտնային արահետ». թույլատրվում է միայն հետիոտների տեղաշարժը.

4.5.2. «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)».

4.5.3. «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)».

4.5.4, 4.5.5. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)». Կառուցվածքորեն և (կամ) 1.2 , 1.23.2 և 1.23.3 հորիզոնական զծանշումներով կամ այլ եղանակով առանձնացման միջոցով արահետի՝ հեծանվային և հետիոտնային կողմերի բաժանված հեծանվահետիոտնային արահետ.

4.5.6, 4.5.7. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)».

4.6. «Նվազագույն արագության սահմանափակում». թույլատրվում է երթևեկել միայն նշված (կմ/ժ) կամ ավելի բարձր արագությամբ.

4.7. «Նվազագույն արագության սահմանափակման գոտու վերջ».

4.8. «Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկության ուղղություն». «Վտանգավոր բեռ» ճանաչման նշաններով կահավորված տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է միայն նշանի վրա սլաքով ցույց տրված ուղղությամբ՝ 4.8.1՝ ուղիղ , 4.8.2՝ դեպի աջ, 4.8.3՝ դեպի ձախ:

4.9. *(պարբերությունն ուժը կորցրել է 15.12.11 N 1798-Ն)*

(գլուխը փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն, 11.04.19 N 439-Ն)

5. ՀԱՏՈՒԿ ԹԵԼԱԴՐԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ (նկար 6)

Հատուկ թելադրանքի նշանները մտցնում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ: Դրանք են՝

5.1. «Ավտոմայրուղի». ճանապարհ, որտեղ գործում են կանոնների՝ ավտոմայրուղիներով երթևեկության կարգը սահմանող պահանջները.

5.2. «Ավտոմայրուղու վերջ».

5.3. «Ճանապարհ ավտոմոբիլների համար». թույլատրվում է նաև մոտոցիկլների երթևեկությունը.

5.4. «Ավտոմոբիլների համար ճանապարհի վերջ».

5.5. «Միակողմ երթևեկությամբ ճանապարհ». ճանապարհ կամ երթևեկելի մաս, որով տրանսպորտային միջոցների երթևեկությունն ամբողջ լայնությամբ իրականացվում է մեկ ուղղությամբ.

5.6. «Միակողմ երթևեկությամբ ճանապարհի վերջ».

5.7.1, 5.7.2. «Ելք դեպի միակողմ երթևեկությամբ ճանապարհ». ելք դեպի միակողմ երթևեկությամբ ճանապարհ կամ երթևեկելի մաս.

5.8. «Դարձափոխային երթևեկություն». ճանապարհի այն հատվածի սկիզբը, որտեղ մեկ կամ մի քանի գոտիներով երթևեկության ուղղությունը կարող է փոխվել հանդիպակացի.

5.9. «Դարձափոխային երթևեկության վերջ».

5.10. «Ելք դեպի դարձափոխային երթևեկությամբ ճանապարհ».

5.11.1 «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ». երթևեկության հոսքին հանդիպակաց, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության համար հատուկ առանձնացված գոտի ունեցող ճանապարհ.

5.11.2. «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհ». ճանապարհ, որով հեծանվորդների և մուպեդների վարորդների երթևեկությունն իրականացվում է հատուկ առանձնացված գոտիով՝ տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հանդիպակաց.

5.12.1 «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհի վերջ».

5.12.2. «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհի վերջ».

5.13.1, 5.13.2. «Ելք դեպի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ».

5.13.3-5.13.4. «Ելք դեպի հեծանվորդների համար գոտիով ճանապարհ».

5.14. «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտի». երթևեկության հոսքին համընթաց, միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար նախատեսված գոտի: Այդ նշանի ազդեցությունը տարածվում է այն գոտու վրա, որի վրա տեղադրված է: Ճանապարհից աջ տեղադրված նշանի ազդեցությունը տարածվում է աջ գոտու վրա.

5.14.1. «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտու վերջ».

5.14.2. «Հեծանվորդների համար գոտի».

5.14.3. «Հեծանվորդների համար գոտու վերջ».

5.15.1. «Երթևեկության ուղղությունները գոտիներով». գոտիների թիվը և երթևեկության թույլատրելի ուղղությունները` դրանցից յուրաքանչյուրով.

5.15.2. «Երթևեկության ուղղությունները գոտիով». երթևեկության թույլատրելի ուղղությունները գոտիով:

Ձախ եզրային գոտուց ձախ շրջադարձը թույլատրող 5.15.1 և 5.15.2 նշանները թույլատրում են նաև հետադարձն այդ գոտուց: 5.15.1 և 5.15.2 նշանների գործողությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա: Խաչմերուկից առաջ տեղադրված 5.8.1 և «5.15.2» նշանների ազդման գոտին տարածվում է ամբողջ խաչմերուկի վրա, եթե այնտեղ տեղադրված 5.15.1 կամ 5.8.2 այլ նշաններն ուրիշ ցուցումներ չեն տալիս.

5.15.3. «Գոտու սկիզբ». արգելակման գոտու կամ վերելքի վրա լրացուցիչ գոտու սկիզբը: Եթե լրացուցիչ գոտուց առաջ տեղադրված այս նշանի վրա պատկերված է 4.6` «Նվազագույն արագության սահմանափակում» նշանը, ապա այն տրանսպորտային միջոցների վարորդները, որոնք հիմնական գոտիով չեն կարող շարունակել երթևեկությունը` առնվազն նշանի վրա ցույց տրված արագությամբ, պետք է վերադասավորվեն լրացուցիչ գոտի.

5.15.4. «Գոտու սկիզբ». տվյալ ուղղությամբ երթևեկության համար նախատեսված եռագոտի ճանապարհի միջին գոտու հատվածի սկիզբը: Եթե 5.15.4 նշանի վրա պատկերված է որևէ տեսակի տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելող նշան, ապա այդ տրանսպորտային միջոցների երթևեկությունը համապատասխան գոտիներով արգելվում է.

5.15.5. «Գոտու վերջ». թափառքի գոտու կամ վերելքի վրա լրացուցիչ գոտու վերջը.

5.15.6. «Գոտու վերջ». տվյալ ուղղությամբ երթևեկության համար նախատեսված եռագոտի ճանապարհի միջին գոտու հատվածի վերջը.

5.15.7. «Երթևեկության ուղղությունը գոտիներով». եթե 5.15.7 նշանի վրա պատկերված է որևէ տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելող նշան, ապա այդ տրանսպորտային միջոցի երթևեկությունը նշված գոտիով արգելվում է: 5.15.7 նշանը համապատասխան թվով սլաքներով կարող է կիրառվել չորս և ավելի գոտիներ ունեցող ճանապարհներին.

5.15.8. «Գոտիների քանակը». ցույց է տալիս երթևեկության գոտիների թիվը և գոտիներով երթևեկության ռեժիմները: Վարորդը պետք է կատարի սլաքների վրա պատկերված նշանների պահանջները.

5.15.1-5.15.7 նշանների վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքները կարող են ունենալ նաև այլ կոնֆիգուրացիաներ (ձևեր),

5.16. «Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ».

5.17. «Տրամվայի կանգառի տեղ».

5.18. «Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ».

5.19.1, 5.19.2. «Հետիոտնային անցում». անցման վայրում 1.14.1 - 1.14.2 գծանշումների բացակայության դեպքում 5.19.1 նշանը տեղադրվում է ճանապարհից ձախ, անցման հեռավոր, իսկ 5.19.2 նշանը` ճանապարհից աջ, անցման մոտակա սահմանի մոտ.

5.19.3 և 5.19.4 - «Անկյունագծային հետիոտնային անցում» նշանները տեղակայվում են այն խաչմերուկներում, որտեղ հետիոտների երթևեկությունը կազմակերպված է խաչմերուկի անկյունագծով.

5.20. «Արհեստական անհարթություն». ցույց է տալիս արհեստական անհարթության սահմանները: Նշանը տեղադրվում է արհեստական անհարթությանը տրանսպորտային միջոցի մոտեցման ուղղության մոտակա սահմանի վրա.

5.21. «Բնակելի գոտի». տարածք, որտեղ գործում են կանոնների` բնակելի գոտու երթևեկության կարգը սահմանող պահանջները.

5.22. «Բնակելի գոտու վերջ».

5.23.1, 5.23.2. «Բնակավայրի սկիզբ». բնակավայրի սկիզբը, որտեղ գործում են կանոնների` բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող պահանջները.

5.24.1, 5.24.2. «Բնակավայրի վերջ». վայր, որտեղից սկսած տվյալ ճանապարհին իրենց ուժը կորցնում են կանոնների` բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող պահանջները.

5.25. «Բնակավայրի սկիզբ». այն բնակավայրի անվանումն ու սկիզբը, որտեղ տվյալ ճանապարհին չեն գործում կանոնների` բնակավայրերում երթևեկության կարգը սահմանող պահանջները.

5.26. «Բնակավայրի վերջ». 5.25 նշանով նշված բնակավայրի վերջը.

5.27. «Կայանման սահմանափակումով գոտի». վայր, որտեղից սկսվում է կայանումն արգելված տարածքը (ճանապարհի հատվածը).

5.28. «Կայանման սահմանափակումով գոտու վերջ».

5.29. «Կարգավորվող կայանման գոտի». վայր, որտեղից սկսվում է թույլատրված և ցուցանակների ու գծանշումների օգնությամբ կարգավորվող կայանման տարածքը (ճանապարհի հատվածը).

5.30. «Կարգավորվող կայանման գոտու վերջ».

5.31. «Առավելագույն արագության սահմանափակումով գոտի»․ վայր, որտեղից սկսվում է առավելագույն արագության սահմանափակմամբ տարածքը (ճանապարհի հատվածը)․

5.32. «Առավելագույն արագության սահմանափակումով գոտու վերջ»․

5.33. «Հետխոտնային գոտի»․ վայր, որտեղից սկսվում է միայն հետխոտների տեղաշարժի համար թույլատրված տարածքը (ճանապարհի հատվածը)․

5.34. «Հետխոտնային գոտու վերջ»:

(գլուխը խմբ., փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն, փոփ., լրաց. 11.04.19 N 439-Ն, լրաց. 19.01.23 N 71-Ն)

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ (նկար 7)

Տեղեկատվության նշանները տեղեկացնում են բնակավայրերի և այլ օբյեկտների տեղակայման, ինչպես նաև սահմանված կամ առաջարկվող երթևեկության ռեժիմների մասին:

6.1. «Առավելագույն արագության ընդհանուր սահմանափակում»․ կանոններով սահմանված առավելագույն արագության ընդհանուր սահմանափակում․

6.2. «Առաջարկվող արագություն»․ ճանապարհի տվյալ հատվածում երթևեկելու համար նախընտրելի արագություն: Նշանի ազդման գոտին տարածվում է մինչև մոտակա խաչմերուկը, սակայն, եթե այդ նշանը կիրառվում է նախազգուշացնող նշանի հետ միասին, ազդման գոտին որոշվում է փոստային հատվածի երկարությամբ․

6.3.1. «Հետադարձի տեղ»․ ձախ շրջադարձն արգելվում է․

6.3.2. «Հետադարձի գոտի»․ հետադարձի համար գոտու երկարությունը: Ձախ շրջադարձն արգելվում է․

6.4. «Կայանման տեղ»․

6.5. «Վթարային կանգառի գոտի»․ կտրուկ վայրէջքի վրա վթարային կանգառի գոտի․

6.6. «Ստորգետնյա հետխոտնային անցում»․

6.7. «Վերգետնյա հետխոտնային անցում»․

6.8.1 - 6.8.3. «Փակուղի»․ միջանցիկ անցում չունեցող ճանապարհ․

6.9.1. «Ուղղությունների նախնական ցուցիչ», 6.9.2. «Ուղղության նախնական ցուցիչ»․ երթևեկելու ուղղություններ դեպի նշանի վրա նշված բնակավայրերը և այլ օբյեկտներ: Այս նշանների վրա կարող են պատկերվել 6.14.1 նշանի պատկերը, ավտոմայրուղու, օդանավակայանի պատկերանշանները և այլ պատկերագրեր: 6.9.1 նշանի վրա կարող են պատկերվել երթևեկության առանձնահատկությունների մասին տեղեկացնող այլ նշանների պատկերներ: 6.9.1 նշանի ներքևի մասում նշվում է նշանի տեղադրման վայրից մինչև խաչմերուկ կամ արգելակման գոտու սկիզբ եղած հեռավորությունը: 6.9.1 նշանը կիրառվում է նաև 3.11 - 3.15 արգելող նշաններից որևէ մեկով կահավորված ճանապարհի հատվածի շրջանցման ուղղության մասին տեղեկություն տալու համար․

6.9.3. «Երթևեկության սխեմա»․ խաչմերուկներում որոշ մանրանների արգելման դեպքում երթևեկության երթուղի կամ բարդ խաչմերուկներում երթևեկության թույլատրելի ուղղություններ․

6.10.1. «Ուղղությունների ցուցիչ», 6.10.2. «Ուղղության ցուցիչ»․ դեպի երթուղու կետերը երթևեկելու ուղղություններ: Նշանների վրա կարող են նշվել մինչև այդ օբյեկտները եղած հեռավորությունները (կմ), պատկերվել ավտոմայրուղու, օդանավակայանի պատկերանշաններ և այլ պատկերագրեր․

6.11. «Օբյեկտի անվանում»․ բնակավայրերից բացի՝ այլ օբյեկտի անվանումը (գետ, լիճ, լեռնանցք, տեսարժան վայր և այլն)․

6.12. «Հեռավորությունների ցուցիչ»․ մինչև երթուղու վրա գտնվող բնակավայրերը եղած հեռավորությունը (կմ)․

6.13. «Կիլոմետրային նշան»․ մինչև ճանապարհի սկիզբը կամ վերջը եղած հեռավորությունը (կմ)․

6.14.1, 6.14.2. «Երթուղու համարը»․ 6.14.1՝ ճանապարհին (երթուղուն) հատկացված համարը, 6.14.2՝ ճանապարհի (երթուղու) համարը և ուղղությունը․

6.15.1 - 6.15.3. «Երթևեկության ուղղություն բեռնատար ավտոմոբիլների համար»․ բեռնատար ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց մեքենաների համար առաջարկվող երթևեկության ուղղությունը, եթե խաչմերուկում դրանց երթևեկությունը որևէ ուղղությամբ արգելված է․

6.16. «Կանգ-գիծ»․ լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի դեպքում տրանսպորտային միջոցների կանգառի տեղ․

6.17. «Շրջանցման սխեմա»․ երթևեկության համար ժամանակավոր փակ ճանապարհի հատվածի շրջանցման երթուղի․

6.18.1 - 6.18.3. «Շրջանցման ուղղություն»․ երթևեկության համար ժամանակավոր փակ ճանապարհի հատվածի շրջանցման ուղղություն․

6.19.1, 6.19.2. «Այլ երթևեկելի մաս վերադասավորվելու նախնական ցուցիչ»․ բաժանարար գոտիով ճանապարհի երթևեկելի մասի երթևեկության համար փակ հատվածի շրջանցման կամ աջակողմյան երթևեկելի մաս վերադառնալու համար երթևեկության ուղղություն:

Բնակավայրից դուրս տեղադրված 6.9.1, 6.9.2, 6.10.1 և 6.10.2 նշանների կանաչ կամ կապույտ հիմնագույնը նշանակում է, որ երթևեկությունը դեպի նշված բնակավայր կամ օբյեկտ իրականացվում է համապատասխանաբար ավտոմայրուղով կամ այլ ճանապարհով:

Բնակավայրերում տեղադրված 6.9.1, 6.9.2, 6.10.1 և 6.10.2 նշանների կանաչ կամ կապույտ հիմնագույնի ներդիրը նշանակում է, որ տվյալ բնակավայրից դուրս գալուց հետո երթևեկությունը դեպի նշանների վրա նշված բնակավայր կամ օբյեկտ կիրականացվի համապատասխանաբար ավտոմայրուղով կամ այլ ճանապարհով, իսկ նշանի սպիտակ հիմնագույնը նշանակում է, որ նշված օբյեկտը գտնվում է տվյալ բնակավայրում.

6.20.1, 6.20.2. «Վթարային ելք». թունելում ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է վթարային ելքը.

6.21.1, 6.21.2. «Դեպի վթարային ելք տեղաշարժման ուղղություն». ցույց է տալիս դեպի վթարային ելք ուղղությունը և մինչև վթարային ելքը եղած հեռավորությունը:

(գլուխը փոփ., լրաց. 15.12.11 N 1798-Ն)

7. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ (նկար 8)

Սպասարկման նշանները տեղեկացնում են համապատասխան օբյեկտների գտնվելու վայրի մասին: Դրանք են՝

- 7.1. «Առաջին բժշկական օգնության կետ».
 - 7.2. «Հիվանդանոց».
 - 7.3. «Ավտոլցավորման կայան».
 - 7.4. «Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկում».
 - 7.5. «Ավտոմոբիլների վրացում».
 - 7.6. «Հեռախոս».
 - 7.7. «Սննդի կետ».
 - 7.8. «Խմելու ջուր».
 - 7.9. «Հյուրանոց կամ մոթել».
 - 7.10. «Հանգրվան».
 - 7.11. «Հանգստի վայր».
 - 7.12. «Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության պահակետ».
 - 7.13. «Ոստիկանություն».
 - 7.14. «Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների հսկման կետ».
 - 7.15. «Ճանապարհային երթևեկության մասին տեղեկություն հաղորդող ռադիոկայանի գործողության գոտի».
- Ճանապարհի հատված, որտեղ իրականացվում է նշանի վրա նշված հաճախականության հաղորդումների ընդունում.
- 7.16. «Վթարային ծառայությունների հետ ռադիոկապի գոտի». Ճանապարհի հատված, որտեղ գործում է վթարային ծառայությունների հետ ռադիոկապի համակարգ՝ նշանի վրա նշված քաղաքացիական հաճախականությամբ.
 - 7.17. «Լողավազան կամ լողափ».
 - 7.18. «Զուգարան».
 - 7.19. «Արտակարգ կապի հեռախոս». ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է օպերատիվ ծառայությունների հետ կապ հաստատելու հեռախոսը.
 - 7.20. «Կրակմարիչ». ցույց է տալիս այն տեղը, որտեղ գտնվում է կրակմարիչը.
 - 7.21. «Ավտոլցավորման կայան՝ էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորությամբ».
 - 7.22. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.23. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.24. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.25. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.26. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.27. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.28. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.29. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.30. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.31. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.32. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.33. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.34. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.35. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.36. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.37. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.38. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.39. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.40. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.41. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
 - 7.42. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)

- 7.43. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.44. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.45. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.46. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.47. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.48. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.49. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.50. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.51. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.52. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.53. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.54. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)
- 7.55. (կեսն ուժը կորցրել է 19.01.23 N 71-Ն)

(գլուխը լրաց. 15.12.11 N 1798-Ն, 11.04.19 N 439-Ն, 16.09.21 N 1522-Ն, փոփ. 19.01.23 N 71-Ն)

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ (ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ) (նկար 9)

Լրացուցիչ տեղեկատվության նշանները (ցուցանակները) ճշտում կամ սահմանափակում են այն նշանների ազդեցությունը, որոնց հետ կիրառվում են: Դրանք են՝

8.1.1. «Հեռավորություն մինչև օբյեկտ». ցույց է տալիս ընթացքի ուղղությամբ նշանից մինչև վտանգավոր հատվածի սկիզբը, համապատասխան սահմանափակում մտցնելու տեղը կամ առջևում գտնվող որոշակի օբյեկտ (վայր) եղած հեռավորությունը.

8.1.2. «Հեռավորություն մինչև օբյեկտ». ցույց է տալիս 2.4՝ «Զիջեք ճանապարհը» նշանից մինչև խաչմերուկ եղած հեռավորությունը, երբ խաչմերուկից անմիջապես առաջ տեղադրված է 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելված է» նշանը.

8.1.3, 8.1.4. «Հեռավորություն մինչև օբյեկտ». ցույց է տալիս հեռավորությունը մինչև ճանապարհից դուրս գտնվող օբյեկտ.

8.2.1. «Ազդման գոտի». ցույց է տալիս նախազգուշացնող նշաններով կահավորված ճանապարհի վտանգավոր հատվածի երկարությունը կամ արգելող և տեղեկատու-ցուցիչ նշանների ազդման գոտին.

8.2.2 - 8.2.6. «Ազդման գոտի». ցուցանակները ցույց են տալիս և (կամ) տեղեկացնում են՝

1) 8.2.2՝ 3.27՝ «Կանգառն արգելված է», 3.28՝ «Կայանելն արգելված է», 3.29՝ «Կայանելն արգելված է ամսվա կենտ օրերին», 3.30՝ «Կայանելն արգելված է ամսվա գույք օրերին» արգելող նշանների ազդման գոտին.

2) 8.2.3՝ 3.27 - 3.30 նշանների ազդման գոտու վերջը.

3) 8.2.4՝ 3.27 - 3.30 նշանների ազդման գոտում գտնվելու մասին.

4) 8.2.5, 7.2.6՝ 3.27 - 3.30 նշանների ազդման ուղղությունը և գոտին, հրապարակի, շենքի ճակատի և այլ տեղերի՝ մի կողմի երկայնքով կանգառի կամ կայանման արգելման դեպքում.

8.3.1 - 8.3.3. «Ազդման ուղղություններ». ցույց են տալիս խաչմերուկից առաջ տեղադրված նշանների ազդման ուղղությունները կամ երթևեկության ուղղությունները՝ դեպի անմիջապես ճանապարհին մոտ գտնվող օբյեկտները.

8.4.1-8.4.8 «Տրանսպորտային միջոցի տեսակ». ցույց է տալիս այն տրանսպորտային միջոցի տեսակը, որի վրա տարածվում է նշանի ազդեցությունը: Այս ցուցանակների հետ կիրառվող նշանների ազդեցությունը տարածվում է՝

1) 8.4.1՝ 3.5 տոննայից ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար, այդ թվում նաև կցորդով շահագործվող ավտոմոբիլների վրա,

1.1) 8.4.2՝ կցորդով կամ կիսակցորդով յուրաքանչյուր տեսակի բեռնատար ավտոմոբիլների կամ տրակտորների, ինչպես նաև մեխանիկական տրանսպորտային միջոցները քարշակող տրանսպորտային միջոցների վրա,

2) 8.4.3՝ թեթև մարդատար, ինչպես նաև մինչև 3,5 տոննա թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլների վրա,

2.1) 8.4.3.1՝ արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորվելու հնարավորություն ունեցող էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների վրա,

3) 8.4.8՝ «Վտանգավոր բեռ» ճանաչման նշանով կահավորված տրանսպորտային միջոցների վրա.

8.4.9-8.4.15. «Բացի տրանսպորտային միջոցի տեսակից». Ցույց են տալիս այն տրանսպորտային միջոցի տեսակը, որի վրա չի տարածվում նշանի ազդեցությունը.

8.4.14 ցուցանակը ցույց է տալիս, որ նշանի ազդեցությունը չի տարածում որպես թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլ օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա.

8.5.1. «Շաբաթ, կիրակի և տոն օրեր», 8.5.2. «Աշխատանքային օրեր», 8.5.3. «Շաբաթվա օրեր». ցուցանակները տեղեկացնում են շաբաթվա այն օրերի մասին, որոնց ընթացքում նշանը գործում է.

8.5.4, 8.5.5 - 8.5.7. «Գործողության ժամանակ». 8.5.4 ցուցանակը տեղեկացնում է օրվա այն ժամերը, իսկ 8.5.5 - 8.5.7 ցուցանակները՝ նաև շաբաթվա այն օրերը, որոնց ընթացքում նշանը գործում է.

8.6.1 - 8.6.9. «Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում». ցույց են տալիս տրանսպորտային

միջոցների կանգնեցման ձևերը՝

- 1) 8.6.1՝ երթևեկելի մասի վրա, մայթի երկարությամբ՝ բոլոր տրանսպորտային միջոցների համար,
- 2) 8.6.2 - 8.6.9՝ մայթամերձ կայանման տեղում՝ թեթև մարդատար ավտոմոբիլների և մոտոցիկլների համար.
- 8.7. «Կայանում չգործարկված շարժիչով». ցույց է տալիս, որ 6.4՝ «Կայանման տեղ» նշանով կահավորված կայանման վայրում տրանսպորտային միջոցների կայանումը թույլատրվում է միայն չգործարկված շարժիչով.
- 8.8. «Վճարովի ծառայություններ». տեղեկացնում է, որ մատուցվող ծառայությունները վճարովի են.
- 8.9. «Կայանման տնողության սահմանափակում». տեղեկացնում է 6.4՝ «Կայանման տեղ» նշանով կահավորված կայանման վայրում տրանսպորտային միջոցի գտնվելու առավելագույն տնողության մասին.
- 8.10. «Ավտոմոբիլների գնման տեղ». տեղեկացնում է, որ 6.4՝ «Կայանման տեղ» կամ 7.11՝ «Հանգստի վայր» նշանով կահավորված հրապարակում առկա է տրանսպորտային միջոցի գնման համար նախատեսված փոս կամ այլ հարմարություն.
- 8.11. «Թույլատրելի առավելագույն զանգվածի սահմանափակում». տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը տարածվում է միայն այն տրանսպորտային միջոցների վրա, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը մեծ է ցուցանակի վրա նշվածից.
- 8.12. «Վտանգավոր կողմակ». նախազգուշացնում է, որ նորոգման աշխատանքների կատարման պատճառով կողմակ մուտք գործելը վտանգավոր է: Կիրառվում է 1.25՝ «Ճանապարհային աշխատանքներ» նշանի հետ.
- 8.13. «Գլխավոր ճանապարհի ուղղություն». ցույց է տալիս գլխավոր ճանապարհի ուղղությունը խաչմերուկում.
- 8.14. «Երթևեկության գոտի». ցույց է տալիս երթևեկության այն գոտին, որի վրա տարածվում է նշանի կամ լուսացույցի ազդեցությունը.
- 8.15. «Կույր հետիոտներ». տեղեկացնում է, որ հետիոտնային անցումից օգտվում են կույրերը: Կիրառվում է 1.22, 5.19.1 և 5.19.2՝ «Հետիոտնային անցում» նշանների և լուսացույցների հետ.
- 8.16. «Խոնավ ծածկույթ». տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը գործում է միայն այն ժամանակահատվածում, որի ընթացքում երթևեկելի մասի ծածկույթը խոնավ է.
- 8.17. «Հաշմանդամներ». տեղեկացնում է, որ 6.4՝ «Կայանման տեղ» նշանի ազդեցությունը տարածվում է միայն մոտոսայլակների և այն ավտոմոբիլների վրա, որոնք կահավորված են «Հաշմանդամ» ճանաչման նշանով.
- 8.18. «Բացի հաշմանդամներից». տեղեկացնում է, որ նշանի ազդեցությունը չի տարածվում «Հաշմանդամ» ճանաչման նշանով կահավորված մոտոսայլակների և ավտոմոբիլների վրա.
- 8.19. «Վտանգավոր բեռի դասը». ցույց է տալիս վտանգավոր բեռների դասի (դասերի) համարն ըստ ստանդարտի: Կիրառվում է 3.32՝ «Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկությունն արգելված է» և 4.8.1 - 4.8.3՝ «Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկության ուղղություն» նշանների հետ.
- 8.20.1, 8.20.2. «Տրանսպորտային միջոցի սայլակի տեսակը». կիրառվում են 3.12 նշանի հետ և ցույց տալիս տրանսպորտային միջոցի մոտեցված առնիների թիվը, որոնցից յուրաքանչյուրի համար նշանի վրա նշված զանգվածը համարվում է սահմանային թույլատրելի.
- 8.21.1 - 8.21.3. «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի տեսակը». կիրառվում են 6.4 նշանի հետ և ցույց տալիս մետրոյի կայարանների, ավտոբուսի (տրոլեյբուսի) կամ տրամվայի կանգառների մոտ գտնվող տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված հրապարակները.
- 8.22.1 - 8.22.3. «Խոչընդոտ». կիրառվում են 4.2.1 - 4.2.3 նշանների հետ և ցույց տալիս խոչընդոտն ու այն շրջանցելու ուղղությունը.
- 8.23. «Աշխատում է տարհանիչը». Ցույց է տալիս, որ 3.27-3.30 նշանների ազդման գոտում իրականացվում է տրանսպորտային միջոցների տարհանում.
- 8.24. «Ծառայողական ավտոմոբիլների համար կայանատեղ»: Ցուցանակի վրա կարող է նշվել կայանատեղն օգտագործող կազմակերպության անվանումը.
- 8.25. «Բացի ծառայողական ավտոմոբիլներից»: Ցուցանակի վրա կարող է նշվել կազմակերպության անվանումը.
- 8.26. «Զբոսաշրջային ավտոբուսների համար կայանատեղի».
- 8.27. «Բացի զբոսաշրջային ավտոբուսներից».
- 8.28. «Շրջիկ առևտուր իրականացնող տրանսպորտային միջոցների համար կայանատեղի».
- 8.29. «Էլեկտրամոբիլների լիցքավորում» կիրառում են 7.4, 7.5, 7.7, 7.9-7.11 նշանների հետ Էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորության մասին տեղեկացնելու համար:

Ցուցանակները տեղադրվում են անմիջապես նշանների տակ, որոնց հետ դրանք կիրառվում են: Եթե նշանները տեղադրված են երթևեկելի մասի, կողմակի կամ մայթի վերևում, ապա 8.2.2 - 8.2.4 և 8.13 ցուցանակները կարող են տեղադրվել նշանի կողքին:

(գլուխը փոփ. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, 25.06.20 N 1066-Ն, 19.01.23 N 71-Ն)
(ձևը փոփ., լրաց., խմբ. 15.12.11 N 1798-Ն, փոփ. 20.12.12 N 1599-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, 25.06.20 N 1066-Ն, լրաց., փոփ. 16.09.21 N 1522-Ն, 19.01.23 N 71-Ն)

1. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՈՒՄ (նկար 10)

1.1՝ հոծ գիծ, որը բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գիծ), նշում ճանապարհի վտանգավոր վայրերում երթևեկության գոտիների սահմանները և ցույց տալիս երթևեկելի մասի սահմանները, ուր մուտքն արգելված է, ցույց է տալիս տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները.

1.2՝ հոծ գիծ (եզրային), որը ցույց է տալիս երթևեկելի մասի և բաժանարար գոտու եզրը.

1.3՝ չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գծեր).

1.4՝ դեղին հոծ գիծ, որը ցույց է տալիս այն տեղերը, որտեղ կանգառը և կայանումն արգելված են: Կիրառվում է ինքնուրույն կամ 3.27՝ «Կանգառն արգելված է» նշանի հետ և գծվում է երթևեկելի մասի եզրի մոտ (եզրային գծի առկայության դեպքում՝ դրա փոխարեն) կամ եզրաքարի վերին մակերեսին.

1.5՝ ընդհատվող գիծ, որը բաժանում է երկու կամ երեք երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գիծ), իսկ մեկ ուղղությամբ երկու և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին ցույց է տալիս երթևեկության գոտիների սահմանները.

1.6՝ «մոտեցման գիծ»՝ ընդհատվող գիծ, որը նախազգուշացնում է երթևեկության հանդիպակաց կամ համընթաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող 1.1 կամ 1.11 գծանշանը մոտենալու մասին (յուրաքանչյուր գծիկի երկարությունը երեք անգամ գերազանցում է այդ գծիկների միջև ընկած տարածությունը).

1.7՝ ընդհատվող գիծ, որը ցույց է տալիս երթևեկության գոտիները խաչմերուկի սահմաններում (գծիկների երկարությունը և դրանց միջև ընկած տարածությունը հավասար են).

1.8՝ ընդհատվող լայն գիծ, որը ցույց է տալիս երթևեկելի մասի հիմնական և թափառքի կամ արգելակման գոտիների միջև առկա սահմանը.

1.9՝ ընդհատվող (դարձափոխային) գիծ, որը ցույց է տալիս երթևեկության այն գոտիների սահմանները, որտեղ իրականացվում է դարձափոխային կարգավորում, իսկ եթե դարձափոխային լուսացույցներն անջատված են, բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը.

1.10՝ ընդհատվող դեղին գիծ, որը ցույց է տալիս այն տեղերը, որտեղ կայանելն արգելված է: Կիրառվում է ինքնուրույն կամ 3.28՝ «Կայանելն արգելվում է» նշանի հետ և գծվում է երթևեկելի մասի եզրի մոտ (եզրային գծի առկայության դեպքում՝ դրա փոխարեն) կամ եզրաքարի վերին մակերեսին.

1.11՝ հոծ և ընդհատվող գծերի համակցություն, որոնք՝

1) բաժանում են հանդիպակաց կամ համընթաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը ճանապարհի այն հատվածներում, որտեղ վերադասավորումը թույլատրվում է միայն մեկ գոտուց.

2) ցույց է տալիս հետադարձի, ինչպես նաև մերձակա տարածքներ մուտքի, ելքի և նման տեղերը, որտեղ երթևեկությունը թույլատրվում է միայն մեկ ուղղությամբ.

1.12՝ «Կանգ-գիծ»՝ հոծ գիծ, որը ցույց է տալիս այն տեղը, որտեղ վարորդը պետք է կանգ առնի լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի կամ 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելված է» նշանի առկայության դեպքում, ինչպես նաև երկաթուղային գծանցի առջև, երբ գծանցով երթևեկությունն արգելված է.

1.13՝ ցույց է տալիս այն տեղը, որտեղ վարորդն անհրաժեշտության դեպքում պետք է կանգ առնի և զիջի ճանապարհը հատող ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցներին.

1.14.1, 1.14.2՝ «Զեբր»՝ ցույց են տալիս հետիոտնային անցումը: Գծանշանն պարբեր (1.14.2) ցույց են տալիս հետիոտների շարժման ուղղությունը.

1.15՝ ընդհատվող գծեր, որոնք ցույց են տալիս այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է ճանապարհի երթևեկելի մասը.

1.16.1-1.16.3՝ ցույց են տալիս ուղղորդ կղզյակները՝

1.16.1 - հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերի բաժանման տեղերում,

1.16.2 - համընթաց տրանսպորտային հոսքերի բաժանման տեղերը կամ համընթաց ուղղության տրանսպորտային հոսքերի բաժանման տեղերում,

1.16.3 - տարբեր ուղղությունների տրանսպորտային հոսքերի միացման տեղերում.

1.17՝ դեղին բեկյալ հոծ գիծ, որը ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերը, իսկ 5.18՝ «Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ» նշանի առկայության դեպքում՝ տաքսիների կայանման վայրերը.

1.18՝ ցույց է տալիս խաչմերուկում երթևեկության թույլատրելի ուղղությունները՝ ըստ գոտիների: Կիրառվում է ինքնուրույն կամ 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով» և 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով» նշանների հետ: Փակուղու պատկերով գծանշումը ցույց է տալիս, որ դեպի մոտակա երթևեկելի մաս շրջադարձն արգելվում է: Ձախ եզրային գոտուց ձախ շրջադարձ թույլատրող գծանշումը թույլատրում է նաև հետադարձը.

1.19՝ նախազգուշացնում է մոտենալու մասին՝

1) երթևեկության գոտու վերջին (այն հատվածին, որտեղ տվյալ ուղղությամբ երթևեկության գոտիների թիվը նվազում է): Կարելի է կիրառել «1.20.1-1.20.3. «Ճանապարհի նեղացում» ճանապարհային նշանների հետ.

2) «1.1» կամ «1.11» գծանշմանը, երբ դրանք բաժանում են հանդիպակաց (ուղղությունների) տրանսպորտային հոսքերը: Կիրառվում է 1.6. «Մոտեցման գիծ» գծանշման հետ միասին.

1.20՝ նախազգուշացնում է 1.13 գծանշմանը մոտենալու մասին.

1.21՝ «STOP» գրառում՝ նախազգուշացնում է 1.12 գծանշմանը մոտենալու մասին, երբ այն կիրառվում է 2.5՝ «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանի հետ.

1.22՝ ցույց է տալիս ճանապարհի (երթուղու) համարը.

1.23՝ ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության համար նախատեսված հատուկ գոտին.

1.24.1 - 1.24.3՝ կրկնօրինակում են համապատասխանաբար 1.20.2՝ «Ճանապարհի նեղացում», 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» և 8.17՝ «Հաշմանդամներ» ճանապարհային նշանները և կիրառվում դրանց հետ միասին.

1.24.4՝ կրկնօրինակում է 8.4.3.1 ցուցանակը. կիրառվում է ինքնուրույն կամ 8.4.3.1 ցուցանակի հետ.

1.25՝ ցույց է տալիս երթևեկելի մասի արհեստական անհարթությունները, կիրառվում է 5.20՝ «Արհեստական անհարթություն» նշանի հետ.

1.26 (գույնը՝ դեղին)՝ նշում է խաչմերուկի հատվածը, որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի: Կիրառվում է ինքնուրույն կամ 1.35՝ «Խաչմերուկի տարածք» նշանի հետ:

1.1, 1.2 և 1.3 գծերը հատելն արգելվում է.

1.1. Գիծը թույլատրվում է հատել, երբ այն ցույց է տալիս տրանսպորտային միջոցների կայանման տեղերի 1.2 սահմանները՝ կայանման տեղ մուտք գործելու կամ կայանման տեղից դուրս գալու նպատակով մանևրելիս, իսկ գիծը թույլատրվում է հատել կողնակի վրա կանգառ կատարելու և կանգառ կատարելու վայրից դուրս գալու դեպքում, այն տեղերում, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցների կանգառ կամ կայանում.

1.5 - 1.8 գծերը թույլատրվում է հատել ցանկացած կողմից:

Դարձավոխային լուսացույցների բացակայության կամ անջատված լինելու դեպքերում 1.9 գծանշումը թույլատրվում է հատել, եթե այն գտնվում է վարորդից աջ, իսկ միացված դարձավոխային լուսացույցի դեպքում՝ ցանկացած կողմից, եթե այդ գծերը բաժանում են երթևեկության համընթաց ուղղությամբ գոտիները: Դարձավոխային լուսացույցի անջատման դեպքում վարորդը պետք է անհապաղ վերադասավորվի 1.9 գծանշումից դեպի աջ:

Անջատված դարձավոխային լուսացույցների դեպքում երթևեկության հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող 1.9 գծանշումը հատելն արգելվում է.

1.11 գիծը թույլատրվում է հատել ընդհատվող գծի, իսկ վազանցը կամ շրջանցումն ավարտելիս՝ նաև հոծ գծի կողմից:

(բաժինը լրաց., խմբ., փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն, փոփ. 07.06.12 N 737-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, փոփ. 27.10.22 N 1650-Ն, փոփ., խմբ 19.01.23 N 71-Ն)

II. ՈՒՂՂԱԶԻԳ ԳԾԱՆՇՈՒՄ (նկար 11)

Նշում է (են)՝

2.1.1 - 2.1.3՝ ճանապարհային կառույցների (կամուրջների և ուղեկամուրջների հենարանների, եզրապատերի ճակատային մասերի և այլն) տարրերը, երբ դրանք վտանգ են ներկայացնում երթևեկող տրանսպորտային միջոցների համար.

2.2՝ թունելների, կամուրջների և ուղեկամուրջների հենամեջային կառույցների ստորին եզրը.

2.3՝ բաժանարար գոտիների և անվտանգության կղզյակների վրա տեղադրված կլոր կարճապտուները.

2.4՝ ուղղորդ պոնտիկները, ուղեցցերը, ցանկապատերի հենակները և այլն.

2.5՝ ցանկապատերի կողային մակերևույթները՝ ճանապարհների փոքր շառավղով կորացումների, կտրուկ վայրէջքների և այլ վտանգավոր հատվածների վրա.

2.6՝ ճանապարհների ցանկապատերի կողային մակերևույթներն այլ տեղամասերում.

2.7՝ վտանգավոր հատվածներում եզրաքարերը և բարձրացված անվտանգության կղզյակները:

(ձևը լրաց., խմբ., փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն, փոփ. 07.06.12 N 737-Ն, լրաց. 11.04.19 N 439-Ն, փոփ. 27.10.22 N 1650-Ն, փոփ., խմբ 19.01.23 N 71-Ն)

Չև N 3

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ (նկար 12)

«Ավտոզնացք»՝ կցորդներով բեռնատար ավտոմոբիլների և անվավոր տրակտորների (1.4 տ և բարձր դասի) խցիկների կտուրներին, ինչպես նաև համակցված ավտոբուսների և տրոլեյբուսների թափքի կտուրների առջևի մասում

տեղադրված, իրարից 150 - 300 մմ հեռավորությամբ հորիզոնական դասավորված նարնջագույն երեք լապտերիկների տեսքով:

«Արագության սահմանափակում»՝ երեխաների խմբերի կազմակերպված փոխադրում իրականացնող, ինչպես նաև վտանգավոր, ծանրաքաշ և մեծ եզրաչափեր ունեցող բեռներ փոխադրող կամ կանոնների 69-րդ և 71-րդ կետերում սահմանված արագություններից տեխնիկական բնութագրով նախատեսված ցածր արագություն ունեցող տրանսպորտային միջոցների թափքի հետևի ձախ կողմում, թույլատրելի արագության նշումով, 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի տեսքով (տրամագիծը՝ առնվազն 160 մմ, եզրաշերտի լայնությունը՝ տրամագծի 1/10-ի չափով):

«Դանդաղընթաց տրանսպորտային միջոց»՝ արտադրող գործարանի կողմից սահմանված 30 կմ/ժ առավելագույն արագություն ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցների հետևի մասում՝ ֆլուորեսցենտային ծածկույթ ունեցող կարմիր գույնի և լուսանդրադարձող դեղին կամ կարմիր եզրաշերտով հավասարակողմ եռանկյան տեսքով (կողմի երկարությունը՝ 350 - 365 մմ, եզրաշերտի լայնությունը՝ 45 - 48 մմ):

«Երեխաների փոխադրում»՝ երեխաների խմբերի կազմակերպված փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում՝ 1.23՝ «Երեխաներ» նշանի վրայի պատկերով, կարմիր գույնի եզրաշերտով դեղին քառակուսու տեսքով (կողմը՝ առնվազն 250 մմ, եզրաշերտի լայնությունը՝ կողմի 1/10-ի չափով):

«Բուքակներ»՝ բութակավորված դողերով մեխանիկական տրանսպորտային միջոցների հետևի մասում՝ գազաթը վեր, կարմիր եզրաշերտով, սպիտակ գույնի, հավասարակողմ, «ա» պատկերանշանով եռանկյան տեսքով (կողմի երկարությունը՝ առնվազն 200 մմ, եզրաշերտի լայնությունը՝ կողմի 1/10-ի չափով):

«Երկարաչափ տրանսպորտային միջոց»՝ բեռով կամ առանց բեռի 20 մ-ից ավելի երկարություն ունեցող տրանսպորտային միջոցների, երկու և ավելի կցորդներով ավտոգնացքների (անկախ երկարությունից) հետևի մասում՝ լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող դեղին գույնի, կարմիր եզրաշերտով ուղղանկյան տեսքով (չափերը՝ ոչ պակաս, քան 1200 x 200 մմ, եզրաշերտի լայնությունը՝ 40 մմ):

Եթե այդպիսի չափեր ունեցող նշանի տեղադրումը հնարավոր չէ, ապա թույլատրվում է տրանսպորտային միջոցի առանցքին սիմետրիկ տեղադրել 600 x 200 մմ-ից ոչ պակաս չափեր ունեցող երկու միանման նշաններ:

«Խուլ վարորդ»՝ խուլ կամ խուլ ու համր վարորդների կողմից վարվող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասում՝ գազաթը ներքև ուղղված երևակայական հավասարակողմ եռանկյան անկյուններում երեք սև փոքր շրջանների պատկերով դեղին շրջանի տեսքով (նշանի տրամագիծը՝ 160 մմ, փոքր շրջաններինը՝ 40 մմ):

«Մեծ եզրաչափերով բեռ»՝ անկյունագծով իրար հաջորդող կարմիր և սպիտակ գույնի գոլերով, լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող վահանակի տեսքով (չափերը՝ 400 x 400 մմ, գոլերի լայնությունը՝ 50 մմ):

«Վթարային կանգառ»՝ լուսանդրադարձիչ մակերևույթ ունեցող, գազաթը վերև ուղղված, սպիտակ գույնի, կարմիր եզրաշերտով հավասարակողմ եռանկյան տեսքով (կողմը՝ 450 - 550 մմ, եզրաշերտի լայնությունը՝ 40 - 50 մմ):

Կանոնների 23-րդ կետում նախատեսված դեպքերում այս նշանը կարող է կիրառվել նաև տրանսպորտային միջոցից դուրս:

«Վտանգավոր բեռ»՝ վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում ուղղանկյան տեսքով՝ չափերը՝ 690 x 300 մմ, որի աջ մասը 400 x 300 մմ նարնջագույն է և երկարությամբ բաժանված է երկու հավասար մասերի, իսկ ձախ մասը՝ սպիտակ, սև եզրաշերտով (լայնությունը՝ 15 մմ): Նշանի վրա կատարվում են բեռի վտանգավոր հատկությունները բնութագրող նշումներ:

«Ուսումնական տրանսպորտային միջոց»՝ վարման ուսուցման նպատակով օգտագործվող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում սև գույնի «ՈՒ» տառի պատկերով, կարմիր եզրաշերտով, սպիտակ գույնի հավասարակողմ եռանկյան տեսքով (կողմը՝ առնվազն 200 մմ, եզրաշերտի լայնությունը՝ կողմի 1/10-ի չափով):

Թույլատրվում է երկկողմ նշանի տեղադրում թեթև մարդաստար ավտոմոբիլների կտուրներին:

Վարորդի ցանկությամբ կարող են տեղադրվել նաև հետևյալ ճանաչման նշանները՝

«Բժիշկ»՝ բժիշկ-վարորդների կողմից վարվող ավտոմոբիլների առջևի և հետևի մասում, կարմիր խաչի պատկերով, սպիտակ շրջանով ներգծված, կապույտ գույնի քառակուսու տեսքով (կողմը՝ 140 մմ, շրջանի տրամագիծը՝ 125 մմ, խաչի գծիկի լայնությունը՝ 25 մմ, բարձրությունը՝ 90 մմ):

«Հաշմանդամ»՝ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա փոխադրող մեխանիկական տրանսպորտային միջոցների առջևի և հետևի մասերում՝ 8.17՝ «Հաշմանդամներ» նշանի պատկերով, դեղին քառակուսու տեսքով (կողմը՝ 150 մմ):

(ձևը փոփ., խմբ. 20.11.08 N 1373-Ն, լրաց. 20.12.12 N 1599-Ն)

(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 20.11.08 N 1373-Ն, 15.12.11 N 1798-Ն, խմբ., փոփ. 07.06.12 N 737-Ն, փոփ., լրաց. 20.12.12 N 1599-Ն, լրաց., խմբ., լրաց. 11.04.19 N 439-Ն, լրաց. 25.06.20 N 1066-Ն, 16.09.21 N 1522-Ն, խմբ. 11.08.22 N 1230-Ն, լրաց., փոփ. 27.10.22 N 1650-Ն)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՂ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցի արգելակային համակարգերի անսարքություններն ու պայմաններն են՝

1) ճանապարհային կամ վահանակային (ստենդային) փորձարկումների ժամանակ չեն պահպանվում բանվորական արգելակային համակարգի արդյունավետության ստանդարտով սահմանված նորմերը.

2) խախտված է հիդրավլիկ արգելակային հաղորդակի հերմետիկությունը.

3) չի գործում պնևմատիկ կամ պնևմահիդրավլիկ արգելակային հաղորդակի ճնշաչափը.

4) կայանման արգելակային համակարգն ստանդարտով սահմանված թեքության վրա չի ապահովում անշարժ վիճակ:

(1-ին կետը լրաց. 20.11.08 N 1373-Ն)

2. Տրանսպորտային միջոցի ղեկային կառավարման համակարգերի անսարքություններն ու պայմաններն են՝

1) ղեկային կառավարման համակարգի գումարային խաղացքը գերազանցում է հետևյալ ցուցանիշները՝

ա. 10 աստիճան՝ թեթև մարդատար ավտոմոբիլների և դրանց բազայի վրա պատրաստված բեռնատար ավտոմոբիլների և ավտոբուսների մոտ,

բ. 20 աստիճան՝ ավտոբուսների մոտ,

գ. 25 աստիճան՝ բեռնատար ավտոմոբիլների մոտ.

2) առկա են մանրամասերի (դետալներ) ու հանգույցների կառուցվածքով չնախատեսված տեղաշարժեր կամ պարուրակային միացումները ձգված կամ սահմանված ձևով սևեռված չեն, անսարք է ղեկայունակի դիրքի սևեռիչ սարքավորումը.

3) անսարք է կամ բացակայում է կառուցվածքով նախատեսված ղեկային կառավարման ուժեղարարը կամ մոտոցիկլների ղեկային հանդարտիչը.

4) ղեկային կառավարման համակարգն աջակողմյան տեղաբաշխմամբ է:

(2-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն, լրաց. 15.12.11 N 1798-Ն, 11.01.18 N 12-Ն)

3. Տրանսպորտային միջոցի արտաքին լուսային սարքերի անսարքություններն ու պայմաններն են՝

1) արտաքին լուսային սարքերի թիվը, տեսակը, գույնը, դասավորվածությունը և աշխատանքի ռեժիմը չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի կառուցվածքի և ստանդարտներով պահանջներին (արտադրությունից հանված տրանսպորտային միջոցների վրա թույլատրվում է այլ մակնիշների և մոդելների տրանսպորտային միջոցների արտաքին լուսային սարքերի տեղադրում).

2) լապտերների կարգավորումը չի համապատասխանում ստանդարտի պահանջներին.

3) սահմանված ռեժիմով չեն աշխատում կամ կեղտոտված են արտաքին լուսային սարքերը և լուսանդրադարձիչները.

4) լուսային սարքերի վրա բացակայում են լամպերը կամ ցրիչները, կամ օգտագործվում են տվյալ լուսային սարքի տեսակին չհամապատասխանող ցրիչներ կամ լամպեր.

5) առկայծող փարոսիկների տեղակայումը, ամրացման ձևերը և լուսային ազդանշանի տեսանելիությունը չեն համապատասխանում ստանդարտի պահանջներին.

6) տրանսպորտային միջոցի վրա տեղադրված են՝

ա. առջևի մասում՝ ցանկացած գույնի լույսերով հակամառախուղային լապտերներ, շրջադարձի ցուցիչներ և այլ լուսային սարքեր, բացի սպիտակ, դեղին կամ նարնջագույն գույների լույսերից, ցանկացած գույնի լուսասանդրադարձնող հարմարանքներ, բացի սպիտակ գույնից,

բ. հետևի մասում՝ ցանկացած գույնի լույսերով հետընթացի և հաշվառման համարանիշի լուսավորման լապտերիկներ, բացի սպիտակ գույնի լույսերից, ցանկացած գույնի լույսերով այլ լուսային սարքեր, բացի կարմիր, դեղին կամ նարնջագույն գույնի լույսերից, ցանկացած գույնի լուսասանդրադարձնող հարմարանքներ, բացի կարմիր գույնից:

Սույն ենթակետի պահանջները չեն տարածվում տրանսպորտային միջոցների վրա տեղադրված հաշվառման համարանիշերի, տարբերիչ և ճանաչման նշանների վրա.

7) հետին հակամառախուղային լապտերիկները միացված են տրանսպորտային միջոցի արգելակումն ազդարարող լուսային սարքերին:

(3-րդ կետը խմբ. 20.11.08 N 1373-Ն, լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն)

4. Տրանսպորտային միջոցի անիվների ու դողերի անսարքություններն ու պայմաններն են՝

1) դողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը պակաս է՝

ա. 2,0 մմ՝ ավտոբուսների համար,

բ. 1,6 մմ՝ թեթև մարդատար ավտոմոբիլների համար,

գ. 1,0 մմ՝ բեռնատար ավտոմոբիլների համար,

դ. 0,8 մմ՝ մոտոցիկլների և մոպեդների համար:

Կցորդների դողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության նորմերը սահմանվում են որպես քարշակ ծառայող ավտոմոբիլների դողերի նորմերին համապատասխան.

2) դողերն ունեն հենքը (կորդը) մերկացնող տեղային վնասվածքներ (անցքեր, կտրվածքներ, ճեղքվածքներ), ինչպես նաև հիմնակմախքի շերտաբաժանում, պահպանաշերտի և կողերի շերտատում:

3) անվահեցի կամ անվասկավառակի վրա առկա են ճաքեր, կամ բացակայում է դրանց ամրացման հեղույսներից (մանեկներից) թեկուզ մեկը կամ առկա են դրանց ամրացման անցքերի ձևի և չափերի տեսանելի խախտումներ:

4) դողերը չափերով կամ թույլատրելի բեռնվածությամբ չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի տվյալ մոդելին:

5) տրանսպորտային միջոցի նույն առնու վրա տեղադրված են տարբեր չափերի, տարբեր կառուցվածքների, տարբեր մոդելների, պահպանաշերտի տարբեր նախշանկարներով, բութակավորված և չբութակավորված, ցրտադիմացկուն և ոչ ցրտադիմացկուն, նոր և վերականգնված դողեր:

6) **(Ենթակետն ուժը կորցրել է 20.11.08 N 1373-Ն)**

(4-րդ կետը լրաց., խմբ., փոփ. 20.11.08 N 1373-Ն, փոփ. 15.12.11 N 1798-Ն)

5. Տրանսպորտային միջոցի շարժիչի անսարքություններն ու պայմաններն են՝

1) արտածվող գազերում վնասակար նյութերի պարունակությունը կամ դրանց ծխայնությունը գերազանցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

2) խախտված է սնման համակարգի հերմետիկությունը:

3) անսարք է բանած գազերի արտածման համակարգը:

4) խախտված է հենատուփի (կարտեր) օդափոխության համակարգի հերմետիկությունը:

5) արտաքին աղմուկի թույլատրելի մակարդակը գերազանցում է ստանդարտով սահմանված նորմերը:

(5-րդ կետը փոփ., լրաց. 20.11.08 N 1373-Ն, փոփ. 15.12.11 N 1798-Ն)

6. Տրանսպորտային միջոցի այլ անսարքություններն ու պայմաններն են՝

1) ապակեմաքրիչները չեն աշխատում սահմանված ռեժիմով, կամ չեն աշխատում տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները:

2) հետին տեսանելիության հայելիների քանակը, դասավորվածությունը և դասը չեն համապատասխանում ստանդարտի պահանջներին, բացակայում են տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված ապակիները:

3) չի աշխատում ձայնային ազդանշանի սարքը կամ այն, կամ տրվող ազդանշանը չեն համապատասխանում ստանդարտին:

4) տեղադրված են երթևեկության մասնակիցներին վնասվածքներ հասցնելու վտանգ պարունակող կամ վարորդի նստատեղից նրա տեսադաշտը սահմանափակող իրեր կամ առարկաներ:

5) տրանսպորտային միջոցի՝

ա. ապակիների (այդ թվում՝ արտաքին թաղանթապատում ունեցող հետևի դիտապակու կամ հետևի կողային ապակիների) լուսաթափանցելիությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերին,

բ. առջևի դիտապակին կամ առջևի կողային ապակիները վարագուրապատված են,

գ. հետևի դիտապակին կամ հետևի կողային ապակիները վարագուրապատված են և բացակայում են հետին տեսանելիության 2 կողային հայելիները:

6) չեն աշխատում տրանսպորտային միջոցների կառուցվածքով նախատեսված՝ թափքի կամ խցիկի դռների կամ շարժիչի ծածկոցի փականները, ցիստեռների բկանցքների և բեռնատար հարթակների կողերի փականները, վառելիքի բաքերի խցանները, վարորդի նստատեղի դիրքը կարգավորող մեխանիզմը, ավտոբուսի դռների վթարային բացիչները և կանգառ կատարելու պահանջի ազդանշանը, ավտոբուսի սրահի ներքին լուսավորության սարքերը, վթարային ելքերը և դրանք գործողության մեջ դնող հարմարանքները, դռների կառավարման հաղորդակը, արագաչափը, պտուտագրիչը, հակաառևանգման և ապակիների տաքացման ու փչահարման սարքերը:

7) բացակայում են կառուցվածքով նախատեսված հետին պաշտպանիչ հարմարանքը, ցեխապաշտպան գոգնոցները և ցայտապաշտպանիչները:

8) անսարք են քարշակի կամ կցորդային մասի քարշակցման կամ հենակցման հարմարանքները, ինչպես նաև բացակայում կամ անսարք են կառուցվածքով նախատեսված ապահովիչ մետաղաձուլանները (շղթաներ): Մոտոցիկլի և կողային կցորդի շրջանակների միացումներում առկա է խաղացք:

9) բացակայում են՝

ա. բժշկական դեղատուփը, կրակմարիչը, վթարային կանգառի նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝ ավտոբուսներում, թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլներում ու անվավոր տրակտորներում,

բ. երկուսից ոչ պակաս հակազդրման հենակներ՝ համապատասխանաբար 3,5 տոննա և 5 տոննայից ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներում և ավտոբուսներում,

գ. բժշկական դեղատուփը, վթարային կանգառի նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝ կողային կցորդով մոտոցիկլներում:

Ավտոբուսում պետք է լինի առնվազն երկու կրակմարիչ, մեկը՝ վարորդի խցիկում, մյուսը՝ սրահում, իսկ մնացած նշված տրանսպորտային միջոցներում՝ դյուրահաս տեղերում:

Բժշկական դեղատուփում պարունակվող պարտադիր դեղերի և բժշկական պարագաների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը:

10) տրանսպորտային միջոցները, բացառությամբ սահմանված կարգով նախատեսված դեպքերի, կահավորված են

առկայծող փարոսիկներով (և կամ) հատուկ ձայնային ազդանշաններ արձակող սարքավորումներով, կամ դրանց թափքերի վրա պատկերված են գունազծապատկերներ և գրառումներ (տրանսպորտային միջոցների գունազծապատկերներին և դրանց վրա տեղադրվող առկայծող փարոսիկներին ու հատուկ ձայնային ազդանշաններին ներկայացվող պահանջները սահմանվում են ստանդարտով, իսկ այն տրանսպորտային միջոցների ցանկը, որոնք կարող են կահավորվել դրանցով, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)։

11) բացակայում են կամ չեն աշխատում տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված նստատեղերի գլխակալները կամ անվտանգության ամրագոտիները, կամ անվտանգության ամրագոտիների ժապավենի վրա առկա են տեսանելի պատռվածքներ։

12) մոտոցիկլների և մոպեդների վրա բացակայում են կառուցվածքով նախատեսված ոտնատեղերը, թամբի վրայի ուղևորի համար լայնակի բռնատեղը, իսկ մոտոցիկլների վրա՝ նաև անվտանգության աղեղները։

13) չեն աշխատում պահեստային անիվի բռնիչը, բարձրացման-իջեցման մեխանիզմը կամ կարասիկը։

14) կիսակցորդի վրա բացակայում են կամ անսարք են հենարանային սարքավորումը, հենակների տրանսպորտային վիճակի սեռիչը, հենակների բարձրացման-իջեցման մեխանիզմը։

15) խախտված է շարժիչի, փոխանցման տուփի, պտույտափոխանցիչի, հետին կամրջակի, կցորդման, ակումուլյատորային մարտկոցի, օդի հովացման և լավորակման համակարգի և տրանսպորտային միջոցի վրա լրացուցիչ տեղադրված հիդրավիկ սարքավորումների միացումների կամ կիպարարների հերմետիկությունը։

16) գազաբալոնային սնման համակարգով կահավորված ավտոմոբիլների գազաբալոնների արտաքին մակերեսին նշված տեխնիկական պարամետրերը չեն համապատասխանում տեխնիկական անձնագրում նշված տվյալներին, բացակայում են վերջին և պլանավորված փորձարկումների ամսաթվերը։

17) առանց տրանսպորտային միջոցի հաշվառումն իրականացնող մարմնի թույլտվության՝ տրանսպորտային միջոցի կառուցվածքում կատարված են փոփոխություններ (վերասարքավորումներ)։

18) հաշվառման համարանիշերը կամ դրանց տեղակայման (ամրացման) ձևը չեն համապատասխանում օրենսդրության կամ ստանդարտների պահանջներին կամ հաշվառման համարանիշերը բացակայում են։

19) մեխանիկական տրանսպորտային միջոցը, որով իրականացվում է գործնական վարման ուսուցումը, չունի համապատասխան ճանաչման նշան կամ կահավորված չէ հետին դիտման լրացուցիչ հայելիով (տվորեցնողի համար) կամ կցորդման (բացառությամբ ավտոմատ փոխհաղորդակով (տրանսմիսիայով) տրանսպորտային միջոցների) և արգելակման լրացուցիչ ոտնակներով։

20) անսարք է հեծանիվի դեկը, արգելակը կամ ձայնային ազդանշանի սարքը, կամ այն առջևից կահավորված չէ սպիտակ գույնի լուսանդրադարձիչով և լապտերով կամ լապտերիկով (օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում երթևեկելու համար), հետևից՝ կարմիր գույնի լուսանդրադարձիչով կամ լապտերիկով, իսկ կողերից՝ նարնջագույն կամ կարմիր գույնի լուսանդրադարձիչներով։

21) լծասայլը չունի կառուցվածքով նախատեսված կայանման սարքին արգելակ կամ հակազդրման հենակներ, առջևից կահավորված չէ երկու սպիտակ գույնի լուսանդրադարձիչով կամ լապտերով (օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում երթևեկելու համար), իսկ հետևից՝ երկու կարմիր գույնի լուսանդրադարձիչով կամ լապտերով։

(6-րդ կետը լրաց., խմբ., փոփ. 20.11.08 N 1373-Ն, լրաց. խմբ. 11.04.19 N 439-Ն, լրաց. 11.08.22 N 1230-Ն)

(հավելվածը լրաց., խմբ., փոփ. 20.11.08 N 1373-Ն, լրաց., փոփ. 15.12.11 N 1798-Ն, լրաց. 11.01.18 N 12-Ն, լրաց. խմբ. 11.04.19 N 439-Ն, լրաց. 11.08.22 N 1230-Ն)


Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար


Մ. Թովուզյան

- [Նկար 1](#)
- [Նկար 2](#)
- [Նկար 3](#)
- [Նկար 4](#)
- [Նկար 5](#)
- [Նկար 6](#)
- [1](#)
- [2](#)
- [Նկար 7](#)
- [Նկար 8](#)
- [Նկար 9](#)
- [Նկար 10](#)

| | | | | |
|--------|--------|--------|--------|--------|
| | | | | |
| 1.1 | 1.2 | 1.3 | 1.4 | 1.5 |
| | | | | |
| 1.6 | 1.7 | 1.8 | 1.9 | 1.10 |
| | | | | |
| 1.11 | 1.12 | 1.13 | 1.14.1 | 1.14.2 |
| | | | | |
| 1.15 | 1.16.1 | 1.16.2 | 1.16.3 | 1.17 |
| | | | | |
| 1.18 | 1.19 | 1.20 | 1.21 | |
| | | | | |
| 1.22 | 1.23.1 | 1.23.2 | 1.23.3 | |
| | | | | |
| 1.24.1 | 1.24.2 | 1.24.3 | 1.25 | 1.26 |

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ





[Նկար 11](#)

[Նկար 12](#)

(1-12 նկարները խմբ. 20.11.08 N 1373-Ն, փոփ., լրաց., խմբ. 15.12.11 N 1798-Ն, խմբ. 07.06.12 N 737-Ն, լրաց. 11.01.18 N 12-Ն, խմբ. 11.04.19 N 439-Ն, 25.06.20 N 1066-Ն, 16.09.21 N 1522-Ն, փոփ., լրաց., խմբ. 19.01.23 N 71-Ն)